

Ի՞նչ է Կատարում Քաղաքական Դաշտում. Շո՞ւ, Թե՞ Իրականություն

ԱՐՄԱՆ ԳԱԼՈՅԵԱՆ

Գազիկ Ծառուկեանի՝ քաղաքականութիւն վերադարձը եւ առաջիկայ խորհրդարանական ընտրութիւններին լայն դաշինքով մասնակցելու մտադրութիւնը ամենատարբեր կերպ է մեկնաբանուում. Ծառուկեանը վերադարձուած է, քէն է պահել կամ էլ՝ Ծառուկեանին Սերժ Սարգսեանն է գործողել քաղաքական դաշտ:

Այն, որ Ծառուկեանի վերադարձը ձեռնարկ է ն'չ ՀՀԿ-ին, ո'չ դաշտում եղած միւս ուժերին, որոնք կարող էին լրացնել նրանից յետոյ մնացած բացը, ակնյայտ է: Հետեւաբար ասել, որ Սերժ Սարգսեանն է նրան գործողել, առնուազն չափազանցրած կը լինենք: Նախ նկատենք, որ ինքը՝ Սերժ Սարգսեանը, ՀՀԿ խորհրդին ողջունեց դաշինքների կազմավորումը, բայց միաժամանակ բացասական արտայայտուեց Գազիկ Ծառուկեանի վերադարձի փաստի մասին: «Շատ հակիրճ եմ ասում՝ ես չեմ ողջունել Գազիկ Ծառուկեանի՝ քաղաքական դաշտ վերադառնալը, իսկ ինչ վերաբերում է դաշինքների կազմավորմանը կամ քաղաքական տարբեր ուժերի մասնակցութեանը ընտրապայքարին, ինչպէս ասացի՝ դրական երեւոյթ եմ համարում», - յայտարարել էր նա: Սերժ Սարգսեանը նոյն խօսքերն ասել է նաեւ Ծառուկեանի հետ հանդիպման ժամանակ: «Ժողովուրդ»-ի տեղեկութիւններով՝ հանդիպումը տեղի է ունեցել Ծառուկեանի՝ քաղաքականութիւն վերադարձի նախօրէին՝ Առինջի նրա առանձնատանը: Ս. Սարգսեանը փորձել է համոզել, որ

Ծառուկեանը ետ կանգնի քաղաքականութիւն վերադառնալու մտքից, նաեւ ասել, որ նրա տեղը սպորտն է եւ գործարարութեամբ զբաղուելը: Սակայն ԲՀԿ առաջնորդը պնդել է իր ցանկութիւնը՝ հիմնաւորելով, որ իր թիմի եւ հասարակական պահանջ կայ, ու նրանց մէջ միակ պայմանաւորուածութիւնը, որ ձեռք է բերուել, այն է, որ պէտք է կոռեկտ, առանց վերափոխման քննարկ քարոզարշաւ իրականացնեն: Կը յաջողուի՞ արդեօք, թէ՞ ոչ, ժամանակը ցոյց կը տայ: Բայց նրա թիմի նկատմամբ ազդեցիկ արդէն իսկ տեսանելի է: ՀՀԿ-ական Մհեր Սեդրակեանի որդին դեռ չի յայտարարել «Ծառուկեան» դաշինքով ընտրութիւններին մասնակցելու մասին, արդէն երէկ պաշտօնակա արուեստը նրա փեսան՝ Էրեբունու թաղապետը:

Նկատենք, սակայն, որ առաջիկայում ընտրական պայքարը հարկ է թէ սահուն ընթացք ունենայ: Ի վերջոյ, Ծառուկեանը քաղաքականութիւն է վերադառնում եւ ընտրութիւններին մասնակցում մեծ ակնկալիքով. եթէ անգամ նրան չյաջողուի մեծամասնութիւն կազմել, ապա մտադրուած է խորհրդարանում լուրջ ներկայացուածութիւն ունենալ՝ փորձելով իշխանութիւնից մեծ բաժին վերցնել. նպատակ, որին հասնելու համար նա պատրաստ է մեծ գումարներ ու ռեսուրսներ դնել: Բացի այդ՝ հարկ է թէ նրա մէջ մարած լինի 2015թ-ի փետրուարեան յայտնի իրադարձութիւնների յուշն ու կատարուածի համար գղջալ տալու պարտադրանքի ցանկութիւնը: Սրան գումարած՝ առաջիկայում որոշակի դեր կը

խաղայ խնամին՝ ՀՀԿ-ից հեռացած Յովիկ Աբրահամեանը:

Բնական է, որ այս ընտրութիւններին Աբրահամեանը կը կանգնի Ծառուկեանի կողքին ու կ'աջակցի նրան, ինչը ակնյայտօրէն դուր չի գալիս Սերժ Սարգսեանին, ու նրանց միջեւ հեռակայ բանավէճն արդէն սկսուել է: Այն խորանալու միտումներ է ցուցաբերում, որն անհետեւանք չի կարող մնալ նաեւ Ծառուկեանի համար: Այնպէս որ, իշխանութիւնների հետ բախումներն ինչ-որ փուլում՝ մինչեւ Ապրիլ, այնուամենայնիւ, սպասելի են: Առաւել եւս, որ Ծառուկեանի վերադարձից յետոյ տիրող էջֆորիան նեարդայնացնում է իշխանութիւններին: Ձի բացառուում, որ Ծառուկեանի դէմ արշաւն իշխանութիւնները տանեն վարչապետ Կարէն Կարապետեանի եւ Տաշիրի սեփականատէր Սամուէլ Կարապետեանի միջոցով: Կարենուրագոյն պայմանաւորուածութիւն բանն այն է, որ Ծառուկեանի վերադարձը խառնել է նաեւ Կարապետեանների պլանները. Ծառուկեանը 2015թ. քաղաքականութիւնից հեռացաւ նրանց միջնորդութեամբ՝ յայտարարելով, որ փակում է այդ էջը: Բացի այդ՝ տեղեկութիւններ կան, որ այս ամբարան վերջին Կարապետեանների հետ բանակցութիւնների ժամանակ պայմանաւորուածութիւն է ձեռք բերուել, որ 2018թ. յետոյ Սերժ Սարգսեանն իշխանութիւնը կը փոխանցի ներկայիս վարչապետին, եթէ 2017թ. Աժ ընտրութիւններում ուժերի յարաբերակցութիւնը չփոխուի, ու ՀՀԿ-ն կրկին մենիշխանութիւն ունենայ: Եւ հի-

մա, երբ Ծառուկեանը բացել է քաղաքականութեան էջը, եւ ՀՀԿ-ի մենիշխանութիւնը, ըստ էութեան, ինչ-որ իմաստով հարցականի տակ է դրուում, սցենարը խառնուում է: Դրան գումարած այն փաստը, որ Կարէն Կարապետեանը նոր Սահմանադրութեան համաձայն՝ չի կարողանայ 2018թ.-ին՝ նախագահի պաշտօնում Ս. Սարգսեանի լիազօրութիւնների աւարտից յետոյ, դառնալ վարչապետ, քանի որ չի բաւարարում վերջին չորս տարում ՀՀ-ում մշտական բնակութեան ցենզին. յամենայն դէպս, այդպէս են ակնարկում ՀՀԿ-ականները: Ուստի չի բացառուում՝ Սերժ Սարգսեանն էլ ինչ-որ պահից այս պայմանաւորուածութիւնը չեղարկի: Յիշեցնենք, որ Սերժ Սարգսեանը Նոյեմբերին «Ալ Զազիրային» տուած հարցազրոյցում յայտարարեց, որ ինքը չի բացառում, որ լիազօրութիւնների աւարտից յետոյ դառնայ վարչապետ:

«Մենք 2017թ. ունենալու ենք խորհրդարանական ընտրութիւններ: Եւ որպէսզի ես այդպիսի տարբերակ դիտարկեմ, առնուազն մեր կուսակցութիւնը պէտք է ընտրութիւններում շատ լաւ քուէ ստանայ», - ասել էր նա: Այսպիսով՝ Ծառուկեանի մուտքը խոչընդոտ է ե'ւ ՀՀԿ-ի, ե'ւ ՀՀԿ-ում դերքաւորուող Կարէն Կարապետեանի համար: Ու առաջիկայում դեռ շատ ուշագրաւ իրադարձութիւններ են սպասուում: Ինչ վերաբերում է ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարեանին, որի «ականջները» փորձում են տեսնել այս կամ այն դաշինքի հետեւում՝ սկսած Ծառուկեանից, վերջացրած Սեյրան Օհանեանով, ապա դաշտին տիրապետող անձինք վստահեցնում են, որ Քոչարեանը որեւէ գործընթացի մասնակից չէ. Այսպիսական լեռնաշղթայի բարձունքներում դահուկ է գլուխը:

«ԺՈՂՈՎՈՒՐԴ»

Ձոհասեղանին Դրուած Է Տարիների Ընթացքում Կուտակուած Կապիտալը

ՀԱՅԿ ԴԱԲԹԵԱՆ

Ներիշխանական բեւեռների հակամարտութիւնը, որին այսօր ակնատես ենք, որոշ իմաստով անխուսափելի գործընթաց էր, որը վաղ թէ ուշ պէտք է իր արտացոլանքը գտներ նաեւ քաղաքական վերադասաւորումների մէջ: Տարիներ շարունակ իշխանութեան վարած քաղաքականութիւնը ամբողջապէս ծառայել է տարբեր կլանների շահերի սպասարկմանը: Ժամանակի ընթացքում այդ կլաններից իւրաքանչիւրը զարգացել ու բարգաւաճել է՝ յրնթաց ստեղծելով ենթակլաններ՝ իրենց պահանջներով եւ ընդլայնման բնական ձգտումով: Հիմա արդէն եկել է այն փուլը, երբ իշխանութեան համակարգն ու առկայ հանրային ռեսուրսները այլեւս չեն կարող բաւարարել բոլորի սպասելիքները, առաւել եւս, որ իւրաքանիւրի մասով դրանք անընդհատ աճում են: Նման պայմաններում միջկլանային զգվւտոցն ու ներիշխանական ինքնախժուումը՝ արեւի տակ սեփական տեղը պահելու բնականոն ձգտում է յիշեցնում:

Բոլորը հասկանում են, որ պայքարը դաժան է ինչու, իսկ հետեւանքները՝ անդառնալի: Այս իմաստով 2017 թուականի խորհրդարանական ընտրութիւններում քաղաքական պայքարի նշաձողը սոսկ պատգամաւորական մանդատի կամ նախարարական պորտֆե-

լի համար չի ընթանալու: Ձոհասեղանին դրուած է տարիների ընթացքում կուտակուած կապիտալը, որի պահպանման եւ շարունակական ընդլայնման համար կենաց ու մահու կռիւ է գնալու: Ե'ւ իշխանութեան մէջ գտնուողները, եւ՝ իշխանութեան շարքերը լքողները շատ լաւ գիտեն, թէ իրենք ինչպէս են կուտակել իրենց ունեցուածքը, եւ նրանք աւելի լաւ, քան ցանկացած մէկը, հասկանում են, որ առանց իշխանական լծակների՝ իրենք շատ արագ կարող են ունեզրկուել: Կապիտալի պահպանումը գերիշխող է եւ՝ ԲՀԿ առաջնորդ Գազիկ Ծառուկեանի, եւ՝ նախկին վարչապետ Յովիկ Աբրահամեանի, եւ՝ Գիւմրու նախկին քաղաքապետ Վարդան Ղուկասեանի, եւ՝ էրեբունու նախկին թաղապետ, Աժ պատգամաւոր Մհեր Սեդրակեանի, եւ՝ միւսների համար: Նրանք քաջ գիտակցում են, որ այն մարդիկ, ովքեր զբաղեցնելու են իրենց երբեմնի մանդատներն ու գործադիրի պորտֆելները, կառավարութեան վճարած 500-600 հազար դրամ ռոճիկով չեն կարող սահմանափակուել եւ պէտք է լուծեն սեփական կապիտալի կուտակման հարցը: Իսկ կապիտալի նոր ռեսուրսներ մեր երկրում չկան, եղածն էլ վաղուց արդէն բաժանեաժան է հարուած: Հետեւաբար նորերը պէտք է խլեն հնրերի կուտակածը, իսկ դա ամենեւին էլ դժուար գործ է: Այս տեսանկիւ-

նից շատ խորհրդանշական է նախկին վարչապետ Յովիկ Աբրահամեանի հասցէին արուած էդուարդ Շարմազանովի արած ակնարկը, թէ բացի գետերից եւ վտակներից՝ բնութեան մէջ կան նաեւ արտեզեան ջրեր: Յովիկ Աբրահամեանը արտեզեան ջրերով ձկնաբուծարաններ է ստեղծել եւ տարիներ շարունակ բնութեան հաշուին պիզնէս է վարում: Ընդամենը երկու շաբաթ առաջ կառավարութիւնում քննարկուում էր Արարատեան դաշտի ջրհորերի օգտագործման խնդիրը: Վարչապետ Կարէն Կարապետեանի կողմից յանձնարարական տրուեց՝ ուսումնասիրել եւ ներկայացնել իրավիճակը, ինչպէս նաեւ արգելել ապօրինի կերպով արտեզեան ջրերի օգտագործումը: Այսինքն՝ բաւական է կառավարութիւնը ցանկանայ, եւ նախկին վարչապետը միանգամայն օրինական ճանապարհով կը գրկուի ձկնաբուծարաններից: Սա ընդամենը մի օրինակ է, բայց նման օրինակները շատ-շատ են: Ի վերջոյ հասարակութեանը եղածի շատ քիչ մասն է հասու:

Իսկ ունեցածից եւ ձեռք բերածից հրաժարուելը շատ դժուար բան է՝ ոչ ոք ինքնակամ նման քայլի չի գնայ: Այս տեսանկիւնից խորհրդարանական ընտրութիւնների քաղաքական պայքարը շատ դաժան, միւսչեւ անգամ արեւնալի կարող է լինել՝ ջունգլիների բոլոր կանոններով:

«ՀԱՅԵԼԻ»

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԴՆՉԱՍԿԵԱՆ
ԿՈՒՄԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՅԷԱՉԱՊԱՅԵԱՆ

MASSIS Weekly

Organ of the Armenian Social
Democratic Hunchakian Party
of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
<http://www.massisweekly.com>

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in
US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Հասարակական կազմակերպությունը «Մարտի 1» Որակած է Սեյրան Օհանեանի Յայտարարությունը

«Պնդել, որ Մարտի 1-ին Ձինուած ուժերը ոչ մի դերակատարութիւն չեն ունեցել, ստախոսութիւն է», - յայտարարած է «Մարտի 1» հասարակական կազմակերպութեան համակարգող Առաքէլ Սէմիրճեան:

Պաշտպանութեան նախկին նախարարը, որ 2008-ին կը դեկավարէր Ձինեալ ուժերու գլխաւոր շտաբը, յայտարարեց, թէ բանակը ներգրաւուած է միայն Մարտ 2-էն՝ ստանձնելով մայրաքաղաքի կարեւոր նպատակներու պաշտպանութեան:

«Պէտք է քաղաքական ազնուութիւն ունենայ մարդը, պատասխանի, որ վիտիօ եւ ֆոթօ մաթերիալներ տասնեակ, հարիւրաւոր կան, որ այդ օրը բանակի ստորաբաժանումները եղել են Երեւանում, եւ սահմանից են բերուել», - ըսաւ Սէմիրճեան, աւելցնելով. «Ոչ մէկը չի հերքել այդ հրապարակումից յետոյ: Նոյնիսկ Պաշտպանութեան նախարարութիւնից մարդ էր ձերբակալուել, ով մէկ-երկու տարի անցկացրել է բանտում իբր գաղտնի հրամանը տարածելու համար: Երկրորդ անհերքելի փաստը, նոյն հարցը եւ պարոն Օսկանեանին եմ տուել, որ՝ Դուք հրապարակ իջնելու ժամանակ տեսել էք զինուորական զօրքեր, թէ՛ չէք տեսել: Հայաստանի բոլոր քաղաքացիները, ովքեր Երեւանում են եղել Մարտի 1-ին, տեսել են զինուած ուժերի ներկայութիւնը»:

Որպէս զինուորի ներգրաւման ամենակներե փաստ «Մարտի 1» հասարակական կազմակերպութեան համակարգողը յիշատակած է ժամկէտային զինծառայող Տիրգրան Աբգարեանի մահուան հանգամանքը:

Սէյրան Օհանեան, 2 Մարտ, 2008-ին հեռուստատուողերձով դիմեց ժողովուրդին՝ զգուշացնելով, որ նոյնիսկ փոքր խումբերով հա-



Պաշտպանութեան նախկին նախարար Սեյրան Օհանեան

լաքուելու պարագային Ձինեալ ուժերը միջոցներ պիտի ձեռնարկեն: Ան ընթերցած էր, թէ ինչու Ռոպէրթ Քոչարեան արտակարգ դրութիւն յայտարարած է. «Մայրաքաղաքում երէկ տեղի ունեցած զանգուածային անկարգութիւնների հետեւանքով եւ առաջնորդուելով մեր երկրում կայունութիւնը վերականգնելու եւ մեր քաղաքացիների անվտանգութիւնն ապահովելու հրամայականով...»:

Պնդելով, որ խորհրդարանական ժամանակաւոր յանձնաժողովը իր գեկուցին մէջ լիովին անտեսած էր բանակի մասնակցութեան հարցը՝ նախկին փաստահաւաք խումբի անդամները 2010-ին հրապարակեցին սեփական հաշուետուութիւն՝ յայտարարելով, թէ բազմաթիւ ապացույցներ կան, պնդելով, որ մինչեւ արտակարգ դրութիւն յայտարարելու մասին հրամանագիրը, զինեալ ուժերու կառավարման մարմիններն ու ստորաբաժանումները արդէն իսկ նախապատրաստուած ու ներգրաւուած էին հետընտրական քաղաքական զարգացումներուն ու նաեւ Մարտ 1-ի ցերեկուան ու երեկոյեան իրողարձութիւններուն:

Յովիկ Աբրահամեան Կտանգաւոր Մարդ կը Դառնայ Սերժ Սարգսեանի Համար

Ըստ քաղաքագէտ Ստեփան Դանիէլեանի, նախկին վարչապետ Յովիկ Աբրահամեան շատ վտանգաւոր մարդ կը դառնայ նախագահ Սերժ Սարգսեանի եւ իշխող Հանրապետական կուսակցութեան համար:

«Յիշենք, որ Սերժ Սարգսեանի շտաբի պետը Յովիկ Աբրահամեանն էր, իսկ Սերժ Սարգսեանը ժամանակին Ռոպէրթ Քոչարեանի շտաբի պետն էր: Այդ շտաբի պետը ձեռք է բերում բոլոր այն ստուերային պայմանաւորուածութիւնները, ըստ որոնց այդ ընտրութիւնները տեղի են ունենում ըստ մեր յայտնի եղանակի», - ըսաւ քաղաքագէտը՝ շարունակելով. «Այսինքն՝ շտաբի պետը դա գոյութիւն ունեցող համակարգի գարանտն է՝ այդ պայմանաւորուածութիւնների, եւ, ըստ վերջին տասը տարուայ փորձերի, շտաբի պետը լինում է յաջորդ նախագահը»:

Համակարգը փոխելով՝ Սերժ Սարգսեանն այդ աւանդույթը կարծես թէ ջարդում է, եւ Յովիկ Աբրահամեանն, ըստ երեւոյթի, շատ վտանգաւոր մարդ է դառնում Սերժ Սարգսեանի համար, եւ Յովիկ Աբրահամեանը մասն է գալիս

նոր դերակատարութիւն, եւ իր գնալն այլ կուսակցութիւն՝ եւ ընդդիմութիւն բառը չեմ օգտագործում, այլ՝ կուսակցութիւն, իմ կարծիքով, շատ վտանգաւոր է Հանրապետական կուսակցութեան համար»:

Հարցին, թէ հնարաւոր է, որ Աբրահամեան միանայ «Ծառուկեան դաշինքին», Դանիէլեան պատասխանեց. «Աբրահամեանը կարծես թէ ունի երկու տարբերակ՝ կա՛մ միանալ «Ծառուկեան դաշինքին», կա՛մ միանալ Սէյրան Օհանեանի դաշինքին: Որի՞ն կը միանայ՝ եւ չեմ կարող ասել, բայց, հաշուի առնելով Յովիկ Աբրահամեանի ունակութիւնները եւ Ծառուկեանի ունակութիւններն ու ռեսուրսները, եթէ նրանք համատեղ գործեն, ապա Հայաստանում, ընտրական աւանդույթների համաձայն, նրանք կարող են գոնէ երկրորդ տեղն ունենալ: Իսկ երկրորդ տեղը, եթէ Հանրապետական կուսակցութիւնը կայուն մեծամասնութիւն չապահովի, արդէն երկրորդ փուլում նրանք պէտք է միմիանց դէմ մրցեն, եւ երկրորդ փուլի դէպքում Հանրապետական կուսակցութեան հնարաւորութիւններն աւելի են նուազում»:

Քաղաքական Հասարակութիւնը Չի Հաւատար Ընդդիմադիր Դաշտ Անցած Նախկին Իշխանաւորներուն

Քաղաքական հասարակութեան ներկայացուցիչները չեն հաւատար, որ նախկին բարձրաստիճան պաշտօնեաները իսկապէս ընդդիմադիր դաշտ անցած են ու համակարգային բարեփոխումներու համար պայքար պիտի մղեն:

Երկրի համատարած կաշառակերութեան, անարդարութեան, աղքատութեան վտանգաւոր չափերու, քաղաքական ու տնտեսական մենաշնորհներու մասին յայտարարած են Պաշտպանութեան եւ Արտաքին գործերու նախկին նախարարներ Սէյրան Օհանեան ու Վարդան Օսկանեան, Նախագահի աշխատակազմի դեկավարի նախկին տեղակալ Վիքթոր Տալլաքեան:

Գիւմրիի «Ասպարէզ» ակումբի դեկավար Լեւոն Բարսեղեան գնահատած է. «Նրանց եւ շատ կ'ուզէի տեսնել, օրինակ, նախագահականի դիմաց պիկետի ժամանակ, երբ պահանջում են ազատութիւն քաղաքացիականներին, պահանջում են դադարեցնել Հայաստանի հանքահետքիւնը, քրէական պատասխանատուութեան ենթարկել բանակը հարստահարողներին եւ բանակի ունեցուածքը լափածներին: Ոչ թէ ընդհանուր յայտարարութիւններ»:

Հելսինկեան քաղաքացիական ժողովի Վանաձորի գրասենեակի դեկավար Արթուր Սաքունց շարունակած է՝ կաշառակերութեան դէմ պայքարի մասին իշխանութիւնները խօսած են՝ անձամբ Սերժ Սարգսեանի, Կարէն Կարապետեանի շուրթերով. «Ասելով չի, որ ընդդիմու-

թիւն են: Ուղղակի խօսքեր են»:

Լեւոն Բարսեղեան յիշեցուցած է, որ Վարդան Օսկանեան բան մը ըսած է Մարտ 1-ի մասին, բայց գոնէ ներողութիւն մինչեւ հիմա չէ խնդրած:

Բարսեղեան շարունակեց. «Օհանեանի մասով կ'ուզէի իմանալ, թէ Մարտի 1-ին ցուցարարների վրայ զօրք բերելուց առաջ իր հետ խորհրդակցե՞լ են, ի՞նքն է տուել հրամանը զօրքերը մտցնել քաղաք, թէ՞ չէ»:

Իրաւապաշտպան Զարուհի Յովհաննիսեան տարակուսանքով խօսած է նախկին պաշտօնեաներու ընդդիմադիր յաւակնութիւններու մասին. «Դա նոյն քաղաքական էլիտան է՝ նոյն իշխանական համակարգին սպասարկող եւ միեւնոյն ժամանակ օլիգարխիկ համակարգի հետ ներհիւսուած: Այնպէս որ, նրանք իրենց խաղը ձեւաւորել են իրենց պատկերացումների շրջանակում»:

Քաղաքացիական հասարակութեան ներկայացուցիչները կարծում են, որ Յովիկ Աբրահամեան կը միանայ ընդդիմադիրներուն:

Լեւոն Բարսեղեան նախկին նախագահ Ռոպէրթ Քոչարեանին կը տեսնէ այս գործիչներուն ետեւ:

«Երկարատեւ ժամանակահատուածով միւրճուած էին ամբողջ այդ կողմնապաշտած գործընթացների մէջ եւ մասն էին կազմում իշխող վարչախմբի, եւ յանկարծ մէկ օրում որոշեցին «բացայայտուել» որպէս երդուեալ ազգասէր եւ հայրենասէրներ», - ըսաւ Զարուհի Յովհաննիսեան:

ՀԱԿ-ը Ընտրութիւններին կը Մասնակցի Ստեփան Դեմիրճեանի Կուսակցութեան Հետ

Խորհրդարանական ընտրութիւններին Հայ Ազգային Կոնգրէսը մտադիր է մասնակցել Հայաստանի ժողովրդական կուսակցութեան հետ: Այս մասին Յունուարի 31-ին լրագրողների հետ հանդիպման ժամանակ յայտնել է ՀԱԿ անդամ Վահագն Խաչատրեանը:

Նրա խօսքով, ՀԺԿ-ի հետ համագործակցութիւնը արդէն երկար տարիներ է տեւում, եւ ՀԱԿ-ը յոյս ունի շարունակել այն: Միւս ուժերի հետ բանակցութիւնները դեռ շարունակուած են, ընդ որում ոչ միայն կուսակցութիւնների հետ, այլ եւ ՀԿ-ների ու առանձին մարդկանց: Պատգամաւորների թեկնածուների համամասնական ցուցակը կազմուելու փուլում է: «Պէտք է խոստովանել՝ ես չեմ համարում, որ մենք նոյն շանսերն ունենք, ինչ 2012-ին: Բայց դա պայմանաւորուած է ոչ թէ մեր թիմի կազմով, այլ եւ երկրի ընդհանուր գործընթացներով: Այդուհանդերձ ես վստահ եմ, որ անցողիկ շեմ մենք կը յաղթահարենք: Թէ քանի ձայն կը հաւաքենք, ես չեմ ուզում կուսակցել, որպէսզի իմ ասածները չնմանուեն այն սոցհարցումներին, որոնք ես ինքս այդքան էլ չեմ հաւատում», - յաւելել է Խաչատրեանը:

Ծառուկեան Դաշինքին է Միանում Նաեւ ՀՀԸ-ն

ԲՀԿ նախկին դեկավար Գագիկ Ծառուկեանը շարունակում է քաղաքական ուժերի ու գործիչների հետ միաւորուելու բանակցութիւնները: Ամենայն հաւանականութեամբ մինչեւ շաբաթուայ վերջ դաշինքին միացած ուժերը կը ստորագրեն յուշագիրը: Այս պահի դրութեամբ Ծառուկեան դաշինքին միացել են ԲՀԿ-ն, ՀՀԸ-ն, ՍԴՀԿ-ն, ՀՌԱԿ-ը եւ «Միասնութիւն» շարժումը: Դաշինքում կը հանգրուանեն նաեւ առանձին քաղաքական գործիչներ:

ՀՀԸ գործադիր քարտուղար Կարէն Կարապետեանը NEWS.am-ի հետ զրոյցում ասաց՝ տեւական ժամանակ է քննարկումներ են անցկացնում, սակայն դեռ յստակ որոշում չունեն:

«Տեւական ժամանակ է՝ մենք քննարկումների մէջ ենք ողջ ընդդիմադիր քաղաքական դաշտի հետ, հիմնականում եղել են կոնսուլտատիւ բնույթի քննարկումներ, մօտ ապագայում վերջնական յստակեցում կը լինի, վարչութեան նիստն է առաջիկայում, որի ժամանակ համապատասխան որոշում կ'ընդունուի», - ասաց Կարէն Կարապետեանը:

SYRIAN ARMENIAN RELIEF FUND

Save Support Sustain

Syrian Armenian Relief Fund
P. O. Box 1948
Glendale, CA 91209-1948

www.syrianarmenianrelieffund.org

ԼՈՒՐԵՐ

Ֆրանսայի Սահմանադրական Խորհուրդը Դարձեալ Մերժեց Յեղասպանութեան Ժխտումը Քրեականացնող Օրինագիծը

Ֆրանսայի Սահմանադրական Խորհուրդը 26 Յունուարին հակասահմանադրական համարած է ազգային կամ կրօնական հողի վրայ ցեղասպանութիւններու եւ զանգուածային սպանութիւններու ժխտումը քրեականացնելու մասին Ազգային ժողովի 22 Դեկտեմբերին ընդունած որոշումը:

Սահմանադրական Խորհուրդը որոշ փոփոխութիւններ պահանջած է օրէնքի 173-րդ յօդուածի 2-րդ կէտին մէջ, որ կը վերաբերի ցեղասպանութիւններու եւ որոշ յանցագործութիւններու (որոնց մէջ՝ անոնց, որոնք դեռ իրաւաբանօրէն այդպիսին չեն համարուիր) ժխտման համար տուգանքին:

Սահմանադրական Խորհուրդը սահմանած է, որ ցեղասպանու-

թիւններու ժխտումը քրեականացնելու եւ անկէ բխող տուգանքները խախտեն 1881-ին ընդունուած խօսքի եւ մամուլի ազատութեան մասին օրէնքը, որ կը հակասէ Ֆրանսայի սահմանադրութեան:

Նշենք նաեւ, որ Ազգային ժողովի օրէնքի փոփոխութիւններուն մէջ կը խօսուի քրեականացման մասին ոչ միայն ցեղասպանութիւններու եւ զանգուածային սպանութիւններու, որոնք իրաւաբանօրէն արդէն յանցագործութիւն ճանչցուած են, այլ նաեւ այն յանցագործութիւններու ժխտումը քրեականացնելու, որոնք իրաւաբանօրէն դեռ ցեղասպանութիւն կամ յանցագործութիւն չեն համարուիր եւ այս պահուն պատմաբաններու վէճի առարկայ են:

Դանիոյ Խորհրդարանը Ընդունեց «Յայոց Յեղասպանութեան Մասին» Բանաձեւը

Դանիոյ Խորհրդարանի լիազուծար նիստին քուէարկութեան դրուեցաւ «Հայոց ցեղասպանութեան մասին» բանաձեւը: Դանիոյ Խորհրդարանը բանաձեւը ընդունեց 89 կողմ, 9 դէմ, 11 ձեռնպահ ձայներու յարաբերակցութեամբ: Բանաձեւը քննարկուած էր 19 Յունուարին:

Դանիոյ Խորհրդարանը քուէարկութեան դրաւ «Հայոց Յեղասպանութեան մասին» երկու բանաձեւերէն մէկը: Այս այն բանաձեւն է, ուր օգտագործուած է «Արեւելեան Անատոլիա» (միւս նախագիծին մէջ՝ «Օսմանեան կայսրու-

թիւն էր), եւ «ողբերգական եւ արհնայի իրադարձութիւններ» ձեւակերպումները (միւս նախագիծին մէջ՝ «Չարդեր եւ բռնի տեղահանութիւններ»):

Այս բանաձեւը զգուշաւոր փաստաթուղթ մըն է, եւ զայն դժուար է համարել Հայոց Յեղասպանութեան ճանաչման բանաձեւ: Միաժամանակ, Դանիոյ Թագաւորութեան Խորհրդարանի այս քուէարկութիւնը կարելի է համարել որոշակի տեղաշարժ Հայոց Յեղասպանութեան շուրջ Դանիոյ Թագաւորութեան քաղաքական դիրքորոշման առումով:

Ատրպէյճան Կը Շարունակէ Դժգոհիլ Լավրովէն



Լավրովի եւ Մամէտիարով միջեւ կայացած հանդիպումներէն մէկուն ընթացքին

Ատրպէյճանի արտաքին գործոց նախարար էլմար Մամէտիարով բարձրաձայնած է Ռուսի արտաքին գործոց նախարար Սէրգէյ Լավրովի հետ կայացած հանդիպման արդիւնքն իր դժգոհութիւնը: Հանդիպումը, որ կայացած էր Մոսկուայի մէջ, Մամիտիարովին լաւատեսութիւն չէ ներշնչած:

Դիւանագիտութեան մէջ աննախադէպ նման յայտարարութիւն, Մամիտիարով ըրած է Պաքուի մէջ հրաւիրուած ասուլիսի ժամանակ՝ պատասխանելով Լավրովի հետ հանդիպման վերաբերեալ հարցին:

Ան տեղեկացուցած է, որ Փետրուարին Գերմանիոյ մէջ նախատեսուած է հանդիպում ԵԱՀԿ Մինսկի խումբի համանախագահներուն հետ:

«Հանդիպումը պէտք է տեղի ունենայ Փետրուար 17-19-ը ինկած

ժամանակահատուածին: Ես տուած եմ իմ համաձայնութիւնը», յայտնած է ան:

Լավրով ամենամեայ ամփոփիչ մամուլի ասուլիսի ժամանակ յայտարարած էր, որ Լեռնային Ղարաբաղի մէջ ռազմական գործողութիւններու իրականացումը բացառապէս Ատրպէյճանի ներքին գործը չէ, պատասխանելով ատրպէյճանցի լրագրողի սադրիչ հարցին: Վերջինս հետաքրքրուած էր, թէ արդեօք Ռուսիա կը միջամտէ «Ատրպէյճանի ներքին գործերուն», եթէ ատրպէյճանական կողմը նախաձեռնէ ռազմական գործողութիւններ Լեռնային Ղարաբաղի մէջ:

Կատարուածէն յետոյ Մամիտիարով շտապած էր Մոսկուա՝ հանդիպելու եւ խնդրի առնչութեամբ քննարկումներ ունենալու Լավրովի հետ:

Նոր Տուեալներ Յայաստանի Բնակչութեան Թիւի Մասին

Այս տարուայ Յունուարի 1-ի դրութեամբ ՀՀ մշտական բնակչութեան թուաքանակը, ընթացիկ հաշուառմամբ, կազմել է 2 մլն 986.5 հազար մարդ: Այդ թուով՝ քաղաքայինը՝ 1 մլն 901.7 հազար, գիւղականը՝ 1 մլն 084.8 հազար մարդ:

Ազգային վիճակագրական ծառայութեան հրապարակած տուեալներին համաձայն՝ Հայաստանի մշտական բնակչութեան թուաքանակն այս տարուայ տարեկազմին, 2016 թ. Յունուարի 1-ի համեմատ, նուազել է 0.4 տոկոսով, կամ 12.1 հազար մարդով: Դա ձեւաւորուել է 2016-ին արձանագրուած բնական յաւելածի եւ միգրացիայի գնահատուած մնացորդի ցուցանիշների տարբերութեան հաշուին:

Այս տարուայ Յունուարի մեկի դրութեամբ Երեւանում է ապ-

րել ՀՀ մշտական բնակչութեան 1 մլն 075.9 հազարը:

Հայաստանում աւելացել են մահերը, նուազել՝ ծնունդները, բնական յաւելածը բացասական ցուցանիշ է ունեցել: Նախորդ տարի Հայաստանում արձանագրուել է մահացութեան 28 129 դէպք՝ 2015թ. համեմատ աճելով 0.9 տոկոսով: Բնակչութեան բնական յաւելածի (ծնունդների եւ մահերի տարբերութիւնը) բացարձակ մեծութիւնը նախորդ տարի կազմել է 12 509 մարդ, ինչը 2015-ի տարուայ համեմատ նուազել է 9.9 տոկոսով:

Սրան գուզահեռ, նախորդ տարի նուազել են ծնունդները: 2016-ին արձանագրուել է 40 638 կենդանի ծնուած, ինչը 2015թ. նոյն ժամանակաշրջանի համեմատ նուազել է 2.7 տոկոսով:

Արցախի Հանրապետութեան նախագահ Բակո Սահակեան յայտարարեց, որ հայկական բանակը անցած է փառապանծ ուղղի եւ դարձած համայն հայութեան հպարտութիւնն ու պարծանքը, ժողովուրդի անվտանգութեան հիմնական երաշխաւորը, տարածաշրջանին մէջ խաղաղութեան ու կա-

յունութեան պահպանումի կարեւոր գործօններէն մէկը: «Հայ զինուորը իր անսասան ոգիին եւ անյաղթ բազուկին ուժով փայլուն կ'իրականացնէ հայրենիքի պաշտպանի իր առաքելութիւնը», ըսած է Բակո Սահակեան, նախագահ Սերժ Սարգսեանին յղուած շնորհակարարական նամակին մէջ:

«Մարդկային Իրաւանց Յսկիչը» Կոչ Ըրած Է Ազատ Արձակել Անդրեաս Ղուկասեանին

«Մարդկային Իրաւանց Հսկիչ» կազմակերպութիւնը (Human Rights Watch) կոչ ըրած է ազատ արձակել ընդդիմադիր ակտիվիստ Անդրեաս Ղուկասեանը:

Հեղինակաւոր իրաւապաշտպան կազմակերպութիւնը տարածած հաղորդագրութեամբ անդրադարձած է «Նոր Հայաստան» շարժման ղեկավար անդամի կալանքը եւս երկու ամսով երկարաձգելու որոշման: Կազմակերպութիւնը մատնանշած է տեսանիւթը, ուր Ղուկասեանը ցուցարարներուն հանդարտութեան կոչ կ'ընէ եւ կը յորդորէ՝ ոստիկաններու հետ բախումների չունենալ:

Human Rights Watch վկայակոչած է Եւրոպական դատարանի դիրքորոշումը, որ նախնական կալանքը ծայրայեղ միջոց է, իսկ այդ կիրառելու համար պէտք չէ տրուին ընդհանուր պատճառաբանութիւններ:

Իրաւապաշտպան կազմակերպութեան Հարաւային Կովկասի բաժնի տնօրէն Կէտրիկ Կոկիան



Քաղաքական բանտարկեալ Անդրեաս Ղուկասեան

ընդգծած է, որ քննիչները պէտք է վերանային Անդրեաս Ղուկասեանի նախնական կալանքի իրենց պահանջը եւ ազատ արձակեն անոր մինչեւ արդար դատավարութիւն, ինչը ցոյց կու տայ, որ Հայաստան լիովին կը յարգէ մարդու իրաւունքներու բնագաւառին մէջ իր պարտաւորութիւնները:

սպառնալիքով կարելի չէ հասնիլ նպատակներու: Մարգարէանի ձեռնամբ Արիութեան մետալ ստացաւ նաեւ պայմանագրային գինուոր Տմիթրի Մատեանը, որ չէզոքացուցած էր Դեկտեմբեր 29-ին Տաւուշի սահմանները ներթափանցած ատրպէյճանցի զինուորը:

Նշուեցաւ Յայաստանի Ազգային Բանակի

Շարունակուած էջ 1-էն
մական որեւէ գործողութիւն եւ նոր պատերազմ չի կրնար լուծում ապահովել Արցախի խնդիրին համար: Անոր խօսքով, ապրիլեան պատերազմը վերստին ապացուցեց, որ ուժի գործածութեամբ կամ

Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 massis2@earthlink.net

Էրտողան Պոլսոյ Հայոց Պատրիարքի Ընտրութեան Հարցը Քննարկած Է Համայնքի Ներկայացուցչին Հետ



Պոլսոյ հայկական Սուրբ Փրկիչ հիւանդանոցի հոգաբարձուներու խորհուրդի նախագահ Պետրոս Շիրինօղլու Պոլսոյ Հայոց պատրիարքի ընտրութեան հետ կապուած հանդիպում ունեցած է Թուրքիոյ նախագահ Ռէճեօ Թայյէպ Էրտողանի հետ:

Պոլսոյ հայկական «Ակօս»ի հետ զրոյցին Պետրոս Շիրինօղլու յայտնած է Էրտողանի հետ հեռախօսով զրոյցէն յետոյ Էրտողան հրաւիրած է Անգարայի նախագահական նստավայր, ուր տեղի ունեցած է հանդիպումը:

«Ես նախագահին յայտնեցի, որ հիմնադրամներու ու պատրիարքի ընտրութիւններու ուշացման հետ կապուած հայ համայնքի որոշ անդամներ ինձ կը մեղադրեն ու պահանջեցին կայացնել այդ ընտրութիւնները: Էրտողան ըսաւ, որ նախապէս թրքական իշխանութիւնները ըստ 1863ին ընդունուած Հայոց Սահմանադրութեան թոյլատրած են ընտրութիւնները՝ շեշտելով, որ փոքրամասնութիւնը Աթէշեանի հետ հանդիպման նոյն բաները ըսած է: Էրտողան չի շեշտուց, որ պատրիարքի ընտրութեան ուշացումը հայկական կողմի բացթողումն է, քանի որ անոր իշխանութիւնները չեն խառնուիր»... ըսած է Պետրոս Շիրինօղլու՝ աւելցնելով,

որ Էրտողան խոստացած է, որ յառաջիկային սահմանադրական փոփոխութիւններու հանրաքուէի աւարտէն ետք, անմիջապէս կը զբաղին պատրիարքի ու հիմնադրամներու ընտրութիւններու հարցերով:

Նոյն թեմայով «Ակօս»ի հետ զրոյցին Պոլսոյ պատրիարքարանի հոգեւոր խորհուրդի առաջնորդ եպիսկոպոս Սահական Մաշալեան նշած է. «Եթէ մենք հիմա պատրիարքի ընտրութիւն կայացնելու դիմում ներկայացնենք, ապա հանրաքուէէն ետք ան աւելի արագ ընթացք կը ստանայ, քան անկէ վերջ ներկայացնենք դիմումը»:

Նշենք, որ Պոլսոյ հայ համայնքը երկար ժամանակէ պառակտուած վիճակի մէջ էր, պատրիարքի ընտրութեան հարցով: Պատրիարք Մովսէֆեան առողջական խնդիրներու պատճառով անգործունակ ճանչցուած է, սակայն ըստ Պատրիարքարանի կանոնադրութեան, Պատրիարքը կ'ընտրուի ցմահ:

Այս ընթացքին պատրիարքի գործառույթները իրականացուցած է պատրիարքական ընդհանուր փոխանորդ արք. Արամ Աթէշեան, ուրուն պոլսահայ համայնքի մէկ մասը չէ ընդունած եւ համարած է Էրտողանի կողմէն նշանակուած անձ:

Հայաստան Ու Լեռնային Ղարաբաղ

Շարունակուած էջ 1-էն

հատուածին մէջ հեղինակները ուշադրութեան հրաւիրած են այն հանգամանքի վրայ, որ Ատրպէյճանի նախագահը սահմանադրական հանրաքուէի միջոցով մեծցուցած է իր մենատիրական իշխանութիւնը, իսկ հանրաքուէն տեղի

ունեցած է իշխանութիւններու կողմէ ընդհանուր վերահսկողութեան պայմաններու տակ:

Թուրքիա՝ «մասամբ ազատ» երկիրներու ցանկին մէջ է, սակայն թէ քաղաքացիական եւ թէ քաղաքական ազատութիւններու մասով երկրին մէջ արձանագրուած են լուրջ յետընթացներ:

Ատոմ Էկոնան

Շարունակուած էջ 1-էն

անցեալ Յուլիսին Խորենացի փողոցին վրայ տեղի ունեցած ցոյցի ժամանակ իր կնոջ՝ Արսինէ Խանճեանին բերման ենթարկելը:

«Որպէս սփիւռքահայեր, պէտք է ներգրաւուած ըլլանք այս երկրին մէջ: Եկէք մեր մասնակցութիւնը իրական դարձնենք եւ լսենք այն կոչը, որ ուղղուած է մեզ: Եկէք երթանք այնտեղ, եկէք նստինք փողոցները, եթէ անոր կարիքը ըլլայ: Եկէք ըսենք, որ մենք ասոր մէկ մասն ենք», - այսպէս արեւելիկներն:

«Վերասահմանելով Հայաստանի նշանակութիւնը Սփիւռքի մէջ» խորագրով համաժողովին կը մասնակցէր նաեւ ամերիկահայ յայտնի երաժիշտ Սերժ Թանկեան: Անոր խօսքով, սփիւռքահայ արուեստագէտները որեւէ կուսակցութեան կողքին պիտի չկանգնին, այլ պիտի պաշտպանեն մարդկանց ընտրութիւնը:

«Մենք միաւորուեցանք, երբ «Սասնայ ծռերու» ղեկները սկսան Հայաստանի մէջ: Մենք՝ որպէս արուեստագէտներ, բոլորս մտահոգ էինք այդ իրադարձութիւններով: Մենք մտահոգ էինք, որ երկրի ներքին անարդարութիւններուն դէմ մարդկանց դժգոհութիւնը այդ

ԸՆԿ. ՊՕՂՈՍ ԱԾԵՄԵԱՆ ՄԱՐԿԱՆԱՑՈՒՆ ԿՆՔԵՑ ՈՒՐՈՒԿՈՒԷՅԻ ՄԷՋ

Խոր ցաւով իմացանք Ս.Գ.Հ.Կ. Ուրուկուէյի Շրջանի Հնչակեան վեթերան եւ դեկավար ԸՆԿ. Պօղոս Ածեմեանի մահը (95 տարեկան):

Ան անուրանալի աւանդուեցած է իր կուսակցական կեանքին մէջ: Ողբացեալ ԸՆԿ. Պօղոս Ածեմեան մեծ հեղինակութիւն կը վայելէր համայնքէն ներս եւ շատ մը առիթներով Հնչակեան կուսակցութեան ներկայացուցիչը եղած է տասնամեակներու ընթացքին:

Ուրուկուէյի մէջ գործող գիւնուորական իշխանութիւն ներու օրերուն, ան իր գաղափարական սկզբունքներուն եւ ուղեգիծին համար երկար ժամանակ հետապնդուած է:

Ողբացեալ ԸՆԿ. Պօղոս Ածեմեան արժանացած է Ս.Գ.Հ.Կ. Կեդրոնական Վարչութեան կողմէ «Փարամազ» շքանշանին, 2015 թուականին:



Այս տխուր առիթով կու գանք մեր խորին ցաւակցութիւնները յայտնելու Ուրուկուէյի Շրջանի Վարիչ Մարմինին, հանգուցեալի հարազատներուն, ինչպէս նաեւ Հնչակեան մեծ ընտանիքին:

ՃՈՆ ՀԵՖՔԸՐՆ ԵՐԱՍԻՈՅ ՀԱՐԳԵՐՈՎ ԱՄՆ-Ի ՊԵՏՐՈՒՐԱՐԻ ՕԳՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹ

2011-2014 թուականներուն, Հայաստանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպանի պաշտօնը զբաղեցուցած Ճոն Հեֆքըրն նշանակուած Եւրոպայի ու Եւրասիոյ հարցերով ԱՄՆ-ի պետքարտուղարի օգնականի:

Ինչպէս նշուած է Պետական քարտուղարութեան կայքին մէջ, այս պահուն Հեֆքըրն արտաքին գործոց նախարարի օգնականի պաշտօնակատար է:

Ճոն Հեֆքըրն պիտի փոխարինէ Վիթթորիա Նուլընտը եւ պիտի դառնայ մէկը այն առանցքային պաշտօնեաներէն, որոնք պատասխանատու են Եւրոպայի եւ Եւրասիոյ տարածաշրջաններին մէջ, ներառեալ Հարաւային Կովկասի մէջ ամերիկեան քաղաքականութեան մշակման եւ իրականացման համար: 2015 թուականի Օգոստոսէն



Ճոն Հեֆքըրն կը կատարէր ԱՄՆ-ի Պետական քարտուղարութեան Եւրոպայի եւ Եւրասիոյ հարցերով օգնականի գլխաւոր տեղակալի պարտականութիւնները:

«Ելք» Դաշինքի Հանդիպումները

Շարունակուած էջ 1-էն

Անոնք պարզեցին «Ելք»ի առաջադրանքները ըսելով՝ «Յանկացած հարցին մենք ելք ունենք»...: Այլ խօսքով «Ելք» դաշինքի համար այժմէականը էական հարցերն են, իսկ իրենց նշանաբանը՝ «ընտրութիւն, փոփոխութիւն, յաղթանակ»:

«Ելք» դաշինքի անդամները իրենց հանդիպումներու ընթացքին առարկայական մօտեցումներով անդրադարձան Հայաստանի հիմնախնդիրներուն, ինչպէս նաեւ՝ Արցախին ու սփիւռքը չուզող հարցերուն:

«Ելք» դաշինքի հեռանկարային ծրագիրներուն մէջ կը գտնուի ապագային դառնալ մէկ կուսակցութիւն, Հայաստանը դարձնել եւրոպական «մոտելի» իրաւական ու ժողովրդավարական երկիր ու ապահովել անվտանգութեան այս

լընտրանքներ:

Անոնց ծրագիրներուն մէջ է պետական կառավարումը սկսիլ մաքուր էջով՝ միայն համապատասխան գիտելիք, փորձ եւ բարի վարք ունեցող մասնագէտներու միջոցով: Կրթութեան եւ գիտութեան մէջ ներդնել արդիական եւ կենսական մեթոտներ, շրջաններուն մէջ զարգացնել ներդրումներն ու պիզնէս միջավայրը, խթանել սոցիալական, կրթական, գրաստղային եւ այլ ուղղակարկան նշանակութիւն ունեցող ծրագիրներ, զարգացնել արդիւնաբերական տնտեսութիւնը, Հայաստանի ոռոգման ջուրերու հասանելիութիւն ապահովել 100 տոկոսով: Ընդդիմադիր գործիչները յայտարարեցին որ, Հայաստանի մէջ քաղաքական բանտարկեալներու դրութիւնը պէտք է վերանայ եւ քաղաքական հետապնդումներ պէտք է դադրին:

աստիճանի հասած է: Բոլորս կը սպասենք խորհրդարանական ընտրութիւններուն: Միայն այդպէս կարելի է այդ դժգոհութիւնը պարպել, ցաւը ամոքել:

Գանատահայ դերասանուհի

Արսինէ Խանճեան ընդգծեց, ոչ միայն կարեւոր է որպէս դիտորդ խորհրդարանական ընտրութիւնները վերահսկելը, այլ նաեւ, որ արտերկիր բնակող Հայաստանի քաղաքացիները գան ու քուէարկեն:

ՓԱԹԵԹԱՅԻՆ, ՓՈՒԼԱՅԻՆ ԵՒ ՍՈՒԱՑՈՒԱԾ ՊԱՅԵՐ

Կարելոր ճշտում՝ ԼՂ հարցի լուծման կապակցությամբ. 1997-ի ամռան հանդիպումը

ԺԻՐԱՅՐ ԼԻՊԱՐԻՏԵԱՍ

Մեր նորագոյն պատմութեան մէջ կան պահեր, որոնք, ըստ իս, ճակատագրական են եղել: Դրանցից շատերը քչերին են ծանօթ: Նման պահերի մասին դրանց մասնակիցներից ոմանք նոյնիսկ մոռացել են: Այլօք, եթէ չիշուծ են, յաճախ իրենց ձեռով են չիշուծ. կամ աղոտ, կամ յարմարեցուած՝ իրենց ներկայի քաղաքական պահանջներին:

Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի համար ներկայ պահը կարելոր է, եթէ ոչ ճակատագրական: Քաղաքական որոշ գործիչներ փորձեր են կատարում այդ նորագոյն անցեալի հետ համեմատութիւններ անել ու «պատմութիւնից դասեր քաղել»: Յաճախ այդ փորձերը քարոզիւն են, եւ, սովորաբար, անհիմաստ: Երբեմն էլ նոյնիսկ վնասակար են: Երբ գործիչը պատմութիւնը կառուցում է իր քաղաքական ընթացքի արդարացման, այսօրուայ պէտքերի ու յարմարեցրած չիշողութեան շուրջ եւ կանխորոշում, թէ պատմութիւնից ինչ դաս է քաղում, այդ ընթացիկ պահանջմունքն է, որ որոշում է, թէ պատմութիւնն ինչպէս է ընթացել եւ ոչ հակառակը: Դժուար թէ մտային նման վարժանքը որեւէ մեկին օգտակար լինի, բացի այդ գործչից ու նրա ներկայացրած գաղափարախօսութիւնից կամ կուսակցութիւնից: Իսկ մեզ այսօր անհրաժեշտ են Հայաստանին ու Լեռնային Ղարաբաղին վերաբերող իրական հարցերի իսկական լուծումներ:

Հետեւաբար, անհրաժեշտ են համարում խօսել նման մի պահի մասին, որը պատմութեան ու այսօրեայ կացութեան համար կարեւոր ուղեցուցիչներից մէկը կարող է լինել, նոյնիսկ՝ «դասեր» ներշնչել: Մինչեւ հիմա դժուարանում էի այդ մասին որեւէ նիւթ հրատարակել: Նախ՝ որովհետեւ արդեն երկար ժամանակ է աշխատում եմ ԼՂ հարցին վերաբերող իմ գրքի վրայ, որը պիտի ընդգրկի այս եւ այլ նման պահեր, երկրորդ, որովհետեւ մինչեւ հիմա այդ պահի բացայայտումը անհրաժեշտ չէի համարում: Սակայն նկատի ունենալով բազմազան գործիչների՝ երբեմն արժէքաւոր հրապարակային արտայայտութիւններն ու աւելի յաճախ՝ ինքնավստահ պատմաբանի ոճով ներկայացրած աղբը, կարծում եմ, այս մասին խօսելու ժամանակը հասունացել է:

Նպատակ պնդելը չէ, որ մենք աւելի լաւն էինք, քան այսօրուայ մեր ղեկավարութիւնն ու դիւանագէտները: Խնդիրը պարզապէս մեր 25 տարեկան «նորագոյն» պատմութեան մի կարեւոր դրուագ ուշադրութեան յանձնելն է: Հրապարակում եմ 1997-ի մի հանդիպման պատմութիւնը՝ կրկին զուշացնելու համար, որ այն, ինչ կարելի էր ստանալ որպէս Ղարաբաղեան հարցի լուծում՝ մոտ 20 տարի առաջ, հաւանաբար, հնարաւոր չէր 2005-ին: Եւ այն, ինչ կարելի էր նոյնիսկ 2005-ին, արդէն կարծես թէ անկարելի է այսօր: Կարող է պատահել, որ Մաքրիդեան սկզբունքներն էլ անկարելի դառնան շուտով: Իսկ ի՞նչ է հնարաւոր լինելու 5 տարի յետոյ կամ վաղն առաւօտեան, եթէ չվերանայենք մեր մտածելակերպը, եթէ

նշանակալից փոփոխութիւններ չընդունենք մեր հաշուարկների ու գործելակերպի մէջ:

Խնդիրը կուռող գինուորները չեն, ազգային ոգին չէ, ոչ էլ մեր հիմնական շահերն են: Խնդիրը նոյնիսկ մեր սփիւռքը չէ, որը, որպէս հակազդող միջոց, իբրեւ հակակշիռ է մատնանշում մեր հաշուարկներում՝ ատրպէյճանական նաւթին ու գազին: Խնդիրը մեր հարցի լուծումների կարելիութիւններն են եւ դրանց յարաբերակցութիւնը՝ տարածաշրջանային ու միջազգային յարաբերութիւնների ոլորտներում: Խնդիրը վերաբերում է նաեւ մեր դիւանագիտութեան կարելիութիւններին, որոնք առաւելագոյն արդիւնքն են տալիս, երբ ներքին միացեալ ջանքերով իրական խնդրի դրական լուծման ենք ձգտում:


Հրապարակում եմ իմ չիշողութիւնները՝ 1997-ի ամռան մի հանդիպման մասին, հիմնուած մանրամասն նոթագրութիւնների վրայ, որի նախապատմութիւնը, որքան էլ հետաքրքիր եւ կարեւոր լինի, անհրաժեշտ չեմ համարում շարադրել այդ պահի էությունը արժեւորելու համար: Դա կը լինի գրքում:

ՆԱԽԱԲԱՍ

1996-ի Դեկտեմբերի ԵԱՀԿ Լիսաբոնի գաղաթափողիկն հետեւեցին Մինսկի խմբի կողմից ԼՂ հարցի կարգաւորման՝ մէկ առաջարկութեան երկու տարբերակներ: ԵԱՀԿ Մինսկի խմբի երեք համանախագահները գլխաւոր առաջարկը կողմնորոշեցին ներկայացրին 1997-ի Մայիսի 29-31-ը, երբ այցելեցին տարածաշրջան (համանախագահները վերադարձան տարածաշրջան Յունիսի 12-13-ին՝ երկրորդ տարբերակը ներկայացնելու, երբ ԼՂ-ը մերժեց առաջիկանը):

1997-ի Մայիսի առաջարկը հիմքում ունենալով փաթեթային լուծումը, որովհետեւ ե՛ւ Պաքուն, ե՛ւ Ստեփանակերտը երկար ժամանակ արդէն պնդում էին փաթեթային լուծման տարբերակը՝ իւրաքանչիւրը մտածելով, որ իր համար դա է նպատակը: Այսինքն՝ իւրաքանչիւրը փափաքում էր իրավիճակից պոկել առաւելագոյնը: Կողմերից երեւանն էր միայն, որ մտածում էր, թէ պէտք է անկարելիի հետեւից գնալ, այլ հարցը պէտք է կարգաւորել ըստ կարելիւնի՝ փուլային հիման վրայ, որը տակաւին հնարաւորութիւններ էր ընձեռում ապագայի համար, միաժամանակ, Ղարաբաղն ու Հայաստանը դուրս բերելով վտանգաւոր ստատուս քուոյից: Իսկ այդ՝ փաթեթային լուծման առաջարկը ԼՂ-ին անկախութիւն չէր ընծայում:

Ընդհանրապէս, Երեւանը հետեւեալ մօտեցումն ունէր ԼՂ բանակցութիւնների կապակցութեամբ. կտրուկ չմերժել միջազգային միջնորդների կողմից ներկայացուած առաջարկները, դրանք ընդունել որպէս բանակցութիւնների հիմք, սակայն որեւէ առաջարկի կապակցութեամբ բանակցութիւնները սկսելուց առաջ ներկայացնել առաջարկի մօտեցման, որեւէ կոնկրետ պարբերութեան կամ ձեւակերպման նկատմամբ մերժում կամ վերապահութիւն արտայայտող հիմնաւորուած կէտեր: ԼՂ-ը աւելի հանգիստ էր զգում Մինսկի խմբի



այս կամ այն առաջարկութիւնը առանց տատամտումի մերժելու հարցում:

Սակայն Լիսաբոնից յետոյ ներկայացուած այս փաստաթուղթը տարբերում էր նախորդներից, որովհետեւ փաթեթային էր, այսինքն՝ այն, ինչ Ստեփանակերտն ու Պաքուն պնդում էին: Եւ Ստեփանակերտը բաւականին մտահոգ էր այս առաջարկի բովանդակութեամբ: ԼՂ ղեկավարութիւնը վստահ էր, որ առանց վարանելու մերժելու էր այն եւս: Սակայն այդ ղեկավարութիւնը այս անգամ մտահոգ էր, որ Երեւանի սովորական մօտեցումը կարող է լուրջ հետեւանքներ ունենալ եւ Յունիսի 8-ից ծանր բանակցութիւնների մէջ մտաւ Երեւանի հետ՝ մի ելք գտնելու համար:

Մի կողմ թողնելով այս դրուագի՝ Յունիսի 8-ից սկսած անմիջական նախապատմութիւնը, այստեղ կը պատմեմ բուն դէպքի՝ Յունիսի 14-ի այդ կարեւոր հանդիպման մասին:

Եթէ չեմ սխալուում՝ Յունիսի 14-ի առաւօտեան Ստեփանակերտից զանգեցին, թէ՛ ԼՂ ղեկավարութիւնը փափաքում է Մինսկի խմբի այդ առաջարկի կապակցութեամբ շտապ հանդիպում ունենալ Հայաստանի ղեկավարութեան հետ եւ պատրաստ է հասնելու Երեւան նոյն օրը՝ ամսի 14-ին ու երեկոյեան ունենալ այդ հանդիպումը:

Հիմնուելով իմ նօթերի ու չիշողութեան վրայ վերակառուցում եմ հանդիպումը եւ ներկայացնում այնքան մանրամասն, որքան հնարաւոր է եւ անհրաժեշտ: Ասեմ, որ չիշողութեանս մէջ մեծ տեղ է գրաւել այդ հանդիպումը, որովհետեւ որքան ժամանակը առաջ գնաց, այնքան զգացի դրա կարեւորութիւնը:

ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Հանդիպումը կայացաւ Ծաբաթ երեկոյեան՝ կառավարական ամառանոցներում գտնուող փոքր լողաւազանի մօտ: ԼՂ-ը ներկայացնում էին ԼՂ վարչապետ ու գործող նախագահ Լեոնարդ Պետրոսեանը (Ռոբերտ Քոչարեանը Մարտին նշանակուել էր ՀՀ վարչապետ ու ԼՂ նախագահի նոր ընտրութիւնը տակաւին չէր կայացել), ԼՂ ԱԳ նախարար Արկադի Ղուկասեանը (արդէն յստակ էր, որ նա պիտի լինէր ԼՂ յաջորդ նախագահը) եւ ԼՂ Պաշտպանութեան նախարար Սամուէլ Բաբայեանը: ՀՀ կողմից՝ ՀՀ նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանը, ՀՀ ԱԺ նախագահ Բաբէկ

Արարքեանը, ՀՀ վարչապետ Ռոբերտ Քոչարեանը, ՀՀ Պաշտպանութեան նախարար Վազգէն Սարգսեանը, ՀՀ Ազգային անվտանգութեան նախարար Սերժ Սարգսեանը, ՀՀ ԱԳ նախարար Ալեքսանդր Արզումանեանը եւ ես՝ ՀՀ նախագահի գլխաւոր խորհրդականը, Անվտանգութեան խորհրդի քարտուղարն ու բանագնացը:

Կարելի է ասել՝ ՀՀ եւ ԼՂ անվտանգութեան խորհուրդների համատեղ նիստ էր, սակայն նաեւ անպաշտօն նիստ էր: Բացակայում էր ՀՀ Նախագահի աշխատակազմի ղեկավար Շահէն Կարամանուկեանը, եւ այդ նիստի վերաբերեալ արձանագրութիւն գոյութիւն չունի:

Հանդիպումը բացեց ՀՀ նախագահը՝ խնդրելով, որ ԼՂ ղեկավարութիւնը ներկայացնի իր խնդիրը: ԼՂ ղեկավարութիւնից ոչ ոք որեւէ բան չասաց: Նախագահ Տէր-Պետրոսեանը կրկնեց իր հարցը՝ ընդգծելով, որ ԼՂ ղեկավարութիւնն էր հանդիպում խնդրել: Կրկին պատասխան չկար:

Տէր-Պետրոսեանը նրանց գործը դիւրացնելու համար ասաց մօտաւորապէս հետեւեալը. «Քանի որ խնդիրը վերաբերում է ԼՂ հարցին եւ, յստակօրէն, Մինսկի խմբի վերջին առաջարկին, թոյլ տուէք ներկայացնել մեր այլընտրանքներն ու իւրաքանչիւրի հաւանական հետեւանքները, յետոյ կը խօսենք մեր անելիքների մասին»: Նա ներկայացրեց հինգ տարբերակ (սրանք հիմնականում նոյնն էին, ինչ նա աւելի ուշ՝ Հոկտեմբերին պիտի ներկայացնէր իր՝ «Պատերազմ, թէ՛ խաղաղութիւն» լրջանալու պահին» յօդուածում)՝ ներառեալ փաթեթային եւ փուլայինի հետ կապուած հարցերը: Յետոյ նա ԼՂ ղեկավարներին առաջարկեց արձագանքել իր խօսքին:

Առաջինը խօսեց Լեոնարդ Պետրոսեանը, որն այդ տասը հոգանոց խմբի կազմած շրջանի մէջ նստել էր մօտաւորապէս Տէր-Պետրոսեանի դիմաց, ձախից Քոչարեանն էր ու Բաբայեանը, աջից՝ Ղուկասեանը: Լեոնարդ Պետրոսեանը յայտարարեց, որ ԼՂ ղեկավարութիւնը իր ամբողջ կազմով քննել է իրավիճակը եւ, նկատի ունենալով այդ կացութեան ծանրութիւնը, յանգել այն եզրակացութեան, որ անհրաժեշտ է խնդրին փուլային լուծում տալ, որ փաթեթայինը չի տալու այն, ինչ ուզում ենք:

60ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁ ՕԳԼԵՏԻ ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՆ ՅԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ

Թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արքեպիսկոպոս Տէրտէրեանի Նախագահութեամբ, Օգլընտի Սուրբ Վարդան Հայց. Եկեղեցին Փետրուար 25ին պաշտօնական ճաշկերոյթով եւ արժանավայել յատագրով պիտի տօնախմբէ շրջանի համայնքի 90րդ եւ Եկեղեցույ Օծման 60րդ Տարեդարձները:



Ժողովուրդը: Իսկ ծառայութիւնը առաքելութիւն մըն է, շնորհ մըն է Աստուծոյ կողմէ մեզի տրուած, որուն կենդանի վկայութիւնը կրնանք տալ մեր կեանքի ընթացքը հարստացնելով Քրիստոսի նմանակցութեամբ»: (Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արքեպիսկոպոս Տէրտէրեան):

Այս առթիւ Մուխը պաշտօնապէս պիտի տօնէ նաեւ Եկեղեցույ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Յովէլ Քահանայ Օհանեանի Քահանայական Ձեռնադրութեան եւ Օծման 10րդ Տարեդարձը: Արդարեւ, 2007 թուի Ապրիլ 15ին Թեմակալ Առաջնորդ Սրբազան Հայրը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինումով Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի Խորանին վրայ Քահանայական Ձեռնադրութիւնն ու Օծումը կատարեց Տէր Հօր: Ուրախ ենք յայտնելու, թէ Տէր Հայրը 2009 թուականէն ի վեր Հոգեւոր Հովիւն է Սուրբ Վարդան Հայց. Եկեղեցույ, որ սիրուած ու յարգուած է հաւատացեալներու կողմէ:

«Արդարեւ, Հայաստանեայց Եկեղեցին քրիստոնէական եկեղեցիներու մեծ ընտանիքին մաս կը կազմէ, ամուր պահելով հանդերձ իր ազգային նկարագիրը, որուն իբր հետեւանք շաղախուած է իր ժողովուրդին հետ, անբաժան է մնացած իր ժողովուրդէն, եւ երբ Հայաստանեայց Եկեղեցի կ'ըսենք, մենք կը հասկնանք նոյն ինքն հայ

ճաշկերոյթի ընթացքին Սրբազան Հայրը «Արքեպիսկոպոսի Մրցանակ»ով պիտի պարգևատրէ Մուխէն ներս երկար տարիներ նուիրեալ ծառայութիւն մատուցող Տէր եւ Տիկին Տան եւ Լիսա Մանուկեանը եւ Տէր եւ Տիկին Փիթըր եւ Փէթ Պարսամեանը: Իսկ Առաջնորդարանի «Հայ Ոգի» Շքանշանով պիտի պարգևատրէ նոյնպէս Մուխէն ներս երկարամեայ անձնուէր ծառայութիւն մատուցող Նիքոլ Վասիլերցեանը, Մայտա Հենէսեանը, Արթուր Ետեմեանը, Զաւէն Գաննէեանը եւ Կրէյկ Մագմանեանը:

ՔԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՅԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹԻՒՆԸ ԸՆՏՐԵՑ ՆՈՐ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Յունուարի 28-ին, ժամը 14-ին, Կլենդելու մտերի ունեցաւ Քալիֆորնիայի Հայ Գրողների Միութեան / ԿՀԳՄ / ընդհանուր արտահերթ ժողով, որն արդիւնաւէտ ընթացաւ գրողի հասարակական վարքագծի եւ գրական-կազմակերպչական խնդիրների քննարկման շուրջ: Օրակարգն անյետաձգելի էր եւ հրամայական: Բոլոր ելույթների կառուցողական ոգուն համապատասխան՝ վեր հանուեցին թոյլ տրուած սխալներն ու բացթողումները, ընդգծուեց դրանց անյապաղ շտկման անհրաժեշտութիւնը:

ուելակերպն ու միաձայն քուէարկութեամբ լուծարեց / այժմ արդեն նախկին / վարչութիւնը եւ ընտրեց նոր վարչակազմ. նախագահ՝ արձակագիր Հենրիկ Անասեան, փոխնախագահ՝ բանաստեղծ Գարուշ Հարեանց, քարտուղար-խմբագիր՝ Յակոբ Մկրտչեան, համակարգող՝ բանաստեղծ Սամուէլ Շահբազեան, խորհրդական՝ պատմագիր Արծրուն Ալեքսանեան:

Սոյնով 2017 թ. Յունուարի 28-ին կայացած ԿՀԳՄ արտահերթ ընդհանուր ժողովն սպառեց օրակարգը: Յաւարտ արտահերթ ժողովի, նորընտիր վարչութիւնը գումարեց իր առաջին նիստը, հաստատեց նախատեսուած պարտականութիւնների բաշխումը, մաղթեց

Այդ առումով, ԿՀԳՄ Արտահերթ ժողովը, չեղեալ համարելով միտումնաւոր տրուած հրամանները, պարսաւեց միանձնեայ վար-

ԴՈԿՏ. ԱՆԴՐԱՆԻԿ ՏԱԳԵՍԵԱՆ ՊԻՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՆԵ ԼԻԲԱՆԱՅԱՅ ԳԻՐՔԻ ՅՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ԼԻԲԱՆԱՀԱՅ ԳԻՐՔԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ՏԱԳԵՍԵԱՆ
Օգն. Փրոֆեսոր
Հայկազեան Համալսարան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Հայկազեան Համալսարանի Օգն. Փրոֆեսոր Անդրանիկ Տագէսեանը յատուկ դասախօսութիւն պիտի ներկայացնէ Լիբանանայ Գիրքի Հրատարակութեան Պատմութեան մասին որը տեղի պիտի ունենայ Երեքշաբթի, 7 Փետրուար 2017ին, Երեկոցեան ժամը 7:30ին, Ապրիլ Գրատան մէջ՝ 415 E. Broadway, Glendale, CA. Մուտքը ազատ է: Ներկաները պիտի հիւրասիրուին:

պիտի դառնան նաեւ մատենաշարերը եւ գրական մրցանակները որոնք լիբանանայ գրահրատարակչութեան թափ տուող կարեւոր գործօններ են: Անդրադարձ պիտի կատարուի մանկական գրականութեան, երաժշտական գրականութեան զարգացման եւ լիբանանայ այժմու գրական միջավայրին:

Միաժամանակ պիտի ներկայացուի Դոկտ. Տագէսեանի հեղինակած նոր գիրքը՝ «Լիբանանի Հայօճախը՝ Համարկումի Խաչ-ուղիները (1920-2005)»: Հեղինակը պիտի ներկայացնէ «Արարատ-էսքիճեան» Թանգարանի տնօրէնուհի՝ Մակի Մանկասարեան Կոչիւնը: Դասախօսութիւնը նուիրուած է լիբանանայ գիրքի հրատարակութեան պատմութեան:

Դոկտ. Անդրանիկ Տագէսեան ծնած է Պէյրութ: Աւարտած է ՀԲԸՄ Յովակիմեան Մանուկեան Երկրորդական Վարժարանը (1978): Վկայուած է Երեւանի Պետական Համալսարանի Հայ Գրականութեան բաժնին Մագիստրոս վկայականով (1983), Պէյրութի Ամերիկեան Համալսարանի Քաղաքական Գիտութիւններու բաժնին (Մագիստրոս Արուեստից, 1989), Ապրիլին Համալսարանին դոկտորականը պաշտպանած է Սուանգի Համալսարանին մէջ (Ուէյլզ, 2012): Ան տնօրէնն է Հայկազեան Համալսարանի Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոնին (2011), Պատասխանատու Քարտուղարը՝ Հայկազեան Հայագիտական Հանդէսին (1993), անդամ է Հայագիտութեան Հարցեր հանդէսի խմբագրա-կազմին (2014): Դոկտ. Տագէսեանի գիտական հետաքրքրութիւնները ուղղուած են ինքնութեան, համարկումի, Սփիւռքի պատմութեան, մշակութիւն եւ ժողովրդագրութեան, եւ Միջին Արեւելքի ժողովրդավարութեան հարցերուն:

ցրողական ու մարդկային շիտակ փոխյարաբերութիւններ, գրական

նոր ձեռքբերումներ, առողջութիւն եւ յաջողութիւններ:

Bedros S. Maronian
818/500-9585

Siamanto B. Maronian
818/269-0909

SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs

<p>6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048</p> <ul style="list-style-type: none"> • Life Insurance • Health Insurance • Group & Individual • Long Term Care • Disability 	<p>805 East Broadway Glendale, CA 91205</p> <ul style="list-style-type: none"> • Estate Planning • Will & Living Trust • Full Annual Review • Mortgage Protection • College Planning 	<p>300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101</p> <ul style="list-style-type: none"> • Workman's Compensation • Employee Benefits • Annuity • IRA • 401K & 403B
--	---	---

A.B.A. INSURANCE SERVICES

Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Անհրաժեշտ է

Coverage & Protection should be on the top of your priority list.

Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

Թուրք Մտաւորական Քատիր Աքընի Այցը Ժընև



Ուրբաթ, 27 Յունուար 2017-ին, ժընևեի մէջ կայացաւ շահեկան հանդիպում մը Փարամագի գործունէութեան մասին պատմող գիրքի հեղինակ, Թուրք քաղաքական գործիչ եւ մտաւորական Քատիր Աքընի եւ Դոկտ. Աբէլ Քհնյ. Մանուկեանի միջեւ: Նկատի ունենալով, որ Տ. Աբէլ նախապէս հրատարակած էր Հնչակեան կուսակցութեան կազմաւորման պատմութեան մասին փաստապարական-պատմական գիրք մը, Քատիր Աքըն ցանկութեան յայտնած էր հանդիպելու վերջինիս հետ՝ խորհրդակցելու եւ արխիւային նիւթերու վերաբերեալ փորձառութիւններ փոխանակելու նպատակով: Քատիր Աքըն Զուրիցերիա կ'այցելէր Թուրք ընկերվարականներու հրաւերով Յիւրիխի, Լոզանի եւ ժընևեի մէջ իր գիրքին, ինչպէս նաեւ Թուրքիոյ ընկերվարական շարժումին վերաբերեալ դասախօսութիւններու շարք մը ներկայացնելու ծրագրով:


Շուրջ երկու ժամ տեւող բարեկամական խօսակցութեան ընթացքին, երկու հեղինակները զրուցած են Թուրքիոյ մէջ ընկերվարական շարժումի սկզբնաւորութեան, անոր արագ տարածումին, բայց ամսոս, Հայոց Յեղասպանութեան հետեւանքով անոր կրած մահացու հարուածին մասին: Տ. Աբէլ իր զրուցակիցին ցոյց տուած է Զուրիցերիոյ արխիւներուն մէջ պահպանուած փաստաթուղթերը, որոնք կու գան

ապացուցելու ոչ միայն հայ ուսանողներու յեղափոխական եւ ընկերվարական գաղափարներով տոգորուած ըլլալու փաստը, այլ նաեւ անոնց մասնաւոր ծրագիրը՝ նոյն գաղափարական համոզումները փոխադրելու Օսմանեան Կայսրութիւն՝ Թուրք ժողովուրդին, նաեւ կայսրութեան սահմաններէն ներս սուլթանական բռնատիրութեան տակ հեծող ազգային բոլոր փոքրամասնութիւններուն եղբայրական համակցութեան եւ ազատութեան անկապտելի իրաւունքին հողորդակից դարձնելու համար:

Տ. Աբէլ հիմնաւորեց Աքընի փափաքը այս ուղղութեամբ՝ ըսելով, որ բնականաբար օգտաշատ պիտի ըլլար, եթէ Փարամագի յեղափոխական գործունէութեան մասին պատմող վերջինիս հատորը հայերէն եւ անգլերէն լեզուներու թարգմանուէր, որպէսզի 21-դարու Թուրք հեղինակի մը ուսումնասիրութիւնն ու եզրակացութիւնները մերժողականութեան կողմնակից տարատեսակ հեղինակներու եւ հասարակութեան մօտ առաւել եւս ամրապնդէր Հայ Դատի, ինչպէս նաեւ Հայոց պահանջատիրութեան անհերքելիութեան եւ անժամանցելիութեան փաստը:

Երկու հեղինակները հրաժեշտ տուին իրարուն՝ վերոյիշեալ պատմագիտական ուսումնասիրութիւններուն շուրջ համագործակցելու եւ հետագոտական նոր յայտնաբերումներու արդիւնքները փոխանակելու համաձայնութեամբ:

Պոլսոյ Մէջ կը Տպագրուի Սարոյեանի «Անունս Արամ է» Պատմուածքներու Ժողովածուի Թրքերէն Թարգմանութիւնը



Պոլսոյ մէջ գործող «Արաս» հայկական հրատարակչութիւնը շուտով վաճառքի կը հանէ ամերիկահայ գրող Ուիլյամ Սարոյեանի «Անունս Արամ է» պատմուածքներու ժողովածուի թրքերէն թարգմանութիւնը: Այս մասին յայտնած է հրատարակչութեան պաշտօնական կայքէջը:

Գիրքը առաջին անգամ տպագրուած է 1940-ին անգլերէնով: Պատմուածքները հայ արմատներ ունեցող տղայի՝ Արամ Գարօյլանեանին եւ իր հարազատներուն մասին է, որոնք բնակած են ԱՄՆ-ի Ֆրեզնօ քաղաքը:

«Արաս» հրատարակչութիւնը հիմնադրուած է Պոլիս՝ 1993-ին: Հրատարակչութիւնը կարճ ժամանակի ընթացքին կրցած է շատերուն համար դառնալ «պատուհան» դէպի հայկական գրականութիւն, քանի որ կը գրադի հայ դասականներու, հայոց պատմութեան եւ Հայոց ցեղասպանութեան վերաբերեալ բազմաթիւ գիրքերու թրքերէն թարգմանութեան վերաբերեալ դարձնելով գայն թրքական հասարակութեան բոլոր խաւերուն:

Հրատարակչութիւնը ունի նաեւ արեւմտահայերէնով հրատարակուած գիրքեր:

Մրցանակի Տուչութիւն Հրապարագի Սարգիս Փոշոյլեանի

Չորեքշաբթի, 18 Յունուարին, երեկոյեան, Պէյրութի Թէքէեան Կեդրոնին մէջ տեղի ունեցաւ «Չարթօնք» օրաթերթի 2017 տարուան բացառիկին շնորհահանդէսը: Ձեռնարկին ներկայ էին մտաւորականներ, գրասէրներ եւ մշակութասէր համակիրներ:



Այս առթիւ տեղի ունեցաւ «Չարթօնք»-ի Մկրտիչ Մսրըլեանի անունան հրական մրցանակին տուչութիւնը, որ յանձնուեցաւ հրապարակագիր, բանաստեղծ Սարգիս Փոշոյլեանի (գրական անունով՝ Սարգիս Արմէն), անոր վերջին շրջանին «Չարթօնք» օրաթերթին հետեւողականօրէն աշխատակցելու առ ի գնահատանք:

Մրցանակակիրը ծնած է Պէյրութ 1939-ին, Ալեքսանտրէթի սանձաքին Թուրքիոյ յանձնուած էր Լիբանան հաստատուած Աւետիս Փոշոյլեանի յարկին տակ: Մեծ եղբունին որբացած հայրը կը ստանայ Քառասուն Մանկացի, Սահակեան լիսէի եւ Յովակիմեան Մանուկեան վարժարաններէն ներս: Բանաստեղծութիւններով կ'աշխատակցի «Մեր Նշանաբանն է Յաւա» թերթին: 1967-ին լոյս կ'ընծայ առաջին հատորը՝ «Ազգաբաց», ապա՝ 1977-ին՝ «Հանգրուաններ», 1995-ին՝ «Տերեւա-

թափ», 2004-ին՝ «Աղջամուղջ» բանաստեղծական գրքոյկները: 2015-ին կը հրապարակէ վերջին գործը՝ «Մէկ Սիրտ Ունինք Հագար Յաւ» հրապարակագրական ժողովածուն:

Ան աշխատակցած է «Չարթօնք», «Կանչ», «Ազգային Մշակոյթ», «Արարատ» թերթերուն՝ առաւելաբար քրոնիկներով եւ հանրային մտորումներով: Վերջին շրջանին իր մնացուն աշխատակցութեան համար «Չարթօնք» ի խմբագրութիւնը գինք շնորհեց ազգային հասարակական գործիչ, բարերար Մկրտիչ Մսրըլեանի անունան մրցանակը, որ հաստատուած է 1940-ական թուականներուն: Մրցանակը յանձնեց բարերարի որդին՝ Ծանօթ պատմաբան, սնօրէն, դոկտ. Զաւեն Մսրըլեան, որուն ներկայ էր նաեւ նախկին պետական երեսփոխան Յակոբ Գասարեան:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՍ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)

* \$50,00 * \$100,00 (first class) for USA
\$ 125,00 (Air Mail) for Canada.
\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----
Address: -----
City: ----- State: ----- Zip Code: -----
Country: -----
Tel: ----- Email: -----

Armenian-Iranian Defense Cooperation Discussed in Tehran

TEHRAN -- Defense Minister of Armenia Vigen Sargsian who is on an official visit in the Islamic Republic of Iran met with Minister of Defense and Armed Forces Logistics of Iran Hossein Dehghan on January 31.

 ✦ PEOPLE WITH DISABILITIES

❖ **FREE for PEOPLE With DISABILITIES - GREAT RATES for FAMILIES & STUDENTS**
 ❖ **OFFICIAL OPENING & DEMONSTRATION FRIDAY, JANUARY 20, 2017, AT 5:30 PM**
 ADDRESS: 1060 NORTH ALLEN AVENUE, PASADENA, CA 91104
 For registration and info contact Gaidz Youth Organization: 626-926-7224; email: info@gaidz.org







Instagram @Gaidzyo;
Facebook Gaidz Youth Organization;
Twitter @GaidzYouth

ՀԱՐԱՋԱՏ ԳՐԻՉ, ՍԻՐԱՌԱՏ ԳՐԻՉ (Գրիչ Դաւթեանի «Օրաւուր» գրքի շնորհանդէս)

Ռ. ԿՈՐԻԻՆ

Ամէն անգամ ուրախութեամբ եմ ներկայանում գրքի ներկայացման, հեղինակին շնորհաւորում եմ, գիրքը գնում եմ, այսպիսով նրան ոգեւորում եւ քաջալերում եմ, որպէսզի շարունակի իր նուիրուածութիւնը մեր դպրութեանը եւ մշակոյթին:

Մշակոյթի մէկ կարեւոր ճիւղն է գրականութիւնը, մեր մտքի ու հոգու գանձարանը, Սբ. Մեսրոպ Մաշտոցի հիմնադրած դպրութիւնը դարերի թաւալումով հարստացած ու ճոխացած է անմահ գրիչների մագաղաթներով եւ ստեղծագործութիւններով: Այդ գանձարանը Սբ. Մեսրոպ Մաշտոցի անուամբ մկրտուած մեր Մատենադարանն է, մեր հայ ժողովրդի պարծանքը, յաւերժութեան երթի ճամբան:

Այս անգամ ներկայ գտնուեցի բանաստեղծ Գրիչ Դաւթեանի նոր բանաստեղծական ժողովածու «Օրաւուր» գրքի շնորհանդէսին Հինգշաբթի, Յունուարի 19, 2017 թ. Գլենդէլեան ձմռան եղանակի գաղջ մի օր, երեկոյեան ժամի 7.30ին «Ապրիլ» գրախանութի յարկի ներքոյ գեղեցիկ սրահում՝ գարդարուած հրաշալի կերպարուեստի վարպետ Սիրուհի մի շարք ստեղծագործութիւններով:

Երեկոյի մեկնարկը կատարեց՝ Պր. Առնօ Երիցեանը:

Նա հակիրճ բառերով անդրադարձաւ գրքին եւ հեղինակի կենսագրութեանը, ասելով՝ «Այս բանաստեղծական «Օրաւուր» գիրքը տպագրուել է Երեւանում 2015-ին, բաղկացած 214 էջերից, խմբագրութեամբ՝ Անի Փաշայեանի, սա հեղինակի եօթերորդ գիրքն է: Գրիչ Դաւթեանը ծնուել է Իրանում, տարրականը եւ միջնակարգը աւարտելուց յետոյ բարձրագոյն ուսումն ստացել է Իրանում եւ Անգլիայում վկայակոչուելով տնտեսագիտութեան, պատմութեան, արուեստից եւ վարչարարութեան վկայականներով: Նա, շնորհիւ իր գրականութեան, մշակութային եւ ազգային-հասարակական ծառայութիւնների, արժանացել է գնահատագրերի եւ շքանշանների, վերջինը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան կոնդակով Սբ. Սահակ եւ Սբ. Մեսրոպ շքանշանը՝ յանձնուած ձեռամբ առաջնորդ Յովնան արք. Տէրտէրեանի»:

Գրքի ներկայացումը կատարեց տաղանդաւոր արձակագիր Պօղոս Գուբեյեանը, շուրջ տասնչորս գրքերի հեղինակ, ճանաչուած դէմք մամուլում հրապարակած հասարակական յօդուածներով: Նա գրականագէտի արժանաւորութեամբ գնահատեց Գ. Դաւթեանի գրականութիւնը շեշտը դնելով սիրոյ հրաշքի վրայ ասելով՝ «...Նրա գլխաւոր թեման գլխագիր Սէր-ն է իր համամարդկային, տիեզերական իմաստով, զորս ճիշտ պիտի ըլլար միայն երկու սեռերու միջեւ գոյութիւն ունեցածով սահմանել...»: Նա մի այլ պարբերութեամբ ասաց՝ «...Սիրերգակ բանաստեղծի կողքին, գոյութիւն ունի նաեւ Դաւթեանի մշակութային ու գրական գործիչը, որուն ազգանունը գործունէութեան դաշտը տարածուած է աշխարհով մէկ՝ Իրանէն Անգլիա եւ Ամերիկա անշա-



Տախտիկի աշխատանքով...»:

Սրտի ջերմ խօսք ասելու համար հրաւիրուեց արձակագիր Ռ. Կորիւնը, նա շնորհաւորելով գրքի ծնունդը, բովանդակութեան անդրադառնալով ասաց. «Մեր սիրելի Գրիչը սիրերգակ է սիրային խոր գզգզումային բանաստեղծութիւններով, հայրենաերգակ է հայրենասիրական գրութիւններով, մարդերգակ է մարդկային արժէքները բարձր դասող քերթուածներով:

Նրա գրականութեան մէջ առատ բանաստեղծական բառերի գործածութիւն է նկատուում, որոնցից իւրաքանչիւրը գրական պատկեր է արտայայտում եւ ընթերցողի համար ուսանելի դառնում...»: Ռ. Կորիւնը գրքից ընթերցեց թոռներին եւ զաւակներին ձօնուած հեղինակի բանաստեղծութիւնը. մէկ հատուած նրանից

Եւ յուզուում եմ իմ տնէջերով, Գիւնում եմ խոր սիրով, Որ Աշխարհքը ինչ հրաշք է, Այս կեանքը ինչ առեղծուած է, Որ հիւսել եմ ժամանակը իմ անցեալից մինչ հիմա, Որ կցում եմ զաւակներս Ներկայից առ ապագայ...

Այնուհետեւ ելոյթ ունեցաւ սիրուած բանաստեղծ, երգիծագիր եւ իրանահայ միութեան «Տեղեկատու» ամսագրի խմբագիր Ներսէս Տէր Մեսրոպեանը. նա յուշեր պատմեց իրենց ժամանակի Իրանահայ գրողների միութեան մասին, թէ ինչպէս ինքը եւ Գրիչը անդամակցում էին, ուր տիրում էր աշխուժ գրական ստեղծագործական կեանք, նաեւ անդրադարձաւ «Ալիք» օրաթերթում «Գրական էջ»-ին, որը խմբագրուում էր Գրիչի միջոցով:

Արձակագիր Կիմա Կիրակոսեանը շնորհաւորեց Գրիչի նոր գիրքը եւ կատարեց մի քանի ընթերցումներ:

Այնուհետեւ բեմ հրաւիրուեց գրքի հեղինակը, նա շնորհակալական խօսքերով ակսեց՝ ելոյթ ունեցողներին եւ սրահում ներկայ լսարանին: Նա կենսագրական հետաքրքիր յուշեր պատմեց, կարգաց «Աստուածապաշտութիւն» խորագրով բանաստեղծութիւնը, որի անգլերէն տարբերակը իտալական մրցանակի էր արժանացել Միլանօ քաղաքում, որը հրատարակուել է բացիկի վրայ համահունչ գեղանկարով: Նա ուշադրութեան յանձնեց կարեւոր հանգամաք մեր ուղղագրութեան մասին, թէ՛ «Ես նոր ուղղագրութիւնով եմ գրում գրքերս, հետեւում եմ հայրենիքին, քանի որ նա է մեր կենարոնը, մեր յոյսն ու հաւատքը, թող վերջ տանք մի քանի տեսակ ուղղագրութիւններին...»:

Հեղինակն իր գրքից ընթերցեց բանաստեղծութիւններ:

Ներկաները օգտուեցին հիւրասիրութեան համեստ սեղանից:

Գնահատելի եւ հետաքրքիր ձեռնարկ, ջերմ եւ տպաւորիչ մթնոլորտ:

ARARAT-ESKIJIAN MUSEUM
NATIONAL ASSOCIATION FOR ARMENIAN STUDIES AND RESEARCH (NAASR)
THE ARMENIAN STUDIES PROGRAM
AT CALIFORNIA STATE UNIVERSITY, NORTHRIDGE

Present a Conference on

Hadjin: Remembering a Historic Armenian Community in Cilicia
Dedicated to the memory of Lawrence and Dorothy Avakian

Moderators: **Dr. Vahram Shemmassian and Dr. Hasmig Baran**

Morning Session: 10:00 a.m. – 12:30 p.m.
Dr. Antranig Dakessian
 “Hadjin and Its Legacy”

Kevin Blowers
 “The United Orphanage and Mission Society: Its People and History”

Paul Hoover
 “The Life and Story of Joshua Fidler: The First Superintendent of Hadjin Orphanage”

Hratch Kozybeyokian
 “Knotted Memories and Patches of Hope”

Afternoon Session: 1:30 p.m. – 4:00 p.m.
Araxy and Lory Tatoulian
 Theatrical performance on the life of a Hadjintsi heroine, Aguline Tatoulian

Dr. Rouben Adalian
 “Learning in Hadjin: Students and Teachers”

Dr. George B. Kooshian, Jr.
 “The Web of Hope: The Memoirs of George B. Kooshian”

Dr. Kay Mouradian
 Documentary film presentation: My Mother’s Voice

Closing Session: 4:00 p.m. – 5:00 p.m.
Dr. Vatche Mankerian and Dr. Garineh Avakian
 A tribute to the lost art of music makers of Hadjin and Cilician Armenia

”WATCH THIS EVENT LIVE AT [HTTPS://TOSTREAMLIVE.COM/HAJIN](https://tostreamlive.com/hajin)”

Saturday, February 11, 2017 - 10:00 a.m. to 5:00 p.m.
 George Deukmejian Community Center
 15105 Mission Hills Road – Mission Hills, CA 91345

For more information, please contact (747) 500-7585 or ararat-eskijian-museum@netzero.net.

The conference is open to the public with free admission; lunch will be available for purchase

«ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ...»

ՊՕՐՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԱԳԻՍԵԱՆ

Մանկապարտեզ... Արման թո՛ւռանս հետ իր մանչին մանկապարտեզ էինք ուղեւորում: Նրա մուտքին ասացի՝ «Արմէն, ես էլ գա՞մ մանկապարտեզ», անմիջապէս պատասխանեց, «Մեծ հայրիկ, դու մեծերի մանկապարտեզ գնայ»: Արդեօք այն ինքնաբուխ խօսք էր, թէ՛ տանը լսել էր նման արտայայտութիւն: Մանկապարտեզ . . . մտադիր չեմ մանկապարտեզի իմաստի մասին գրել, որտեղ մինչեւ հինգ տարեկան փոքրերի մտքում՝ դպրոցի ուսումնառութեան արեւազարի լոյս են վարում, նրանց մատղաշ հոգիներում իրենց նմանների հանդէպ մտերմութիւն, մանկական սիրոյ զգացում եւ ինքնագործունէութեան բնագոյր զարգացում:

Գալիֆորնիա նահանգ բնակութիւն հաստատած Արմին-հայեր, «Տարեցների Առողջապահական Խնամքի Կեդրոններ»-ը երգիծանքով «Մանկապարտեզ» են անուանում: Հայ տարեցներից, կողակիցով կամ մենակեաց, ապրում են նպաստընկալ տների շարկաբաժիններում, կամ էլ վարձակալութեամբ տներում: Մենակեաց տարեց մարդիկ... գիտէ՞ք ինչ է մենակեացը, սարսափելի է... չկարողանալ խօսել, չկարողանալ սիրել, չկարողանալ նախկինի նման թեւանցուկ ձեմել, չզգալ կողակիցի ջերմութեան հուրը, նրա ակներից հոսած ժպիտը, այն մեղմելու համար է, որ գնում են «Մանկապարտեզ»: Այս երկրում գաւազը ծնողին խնամելու պարտաւորութիւն չունի, պետութիւնն է այն հոգում: Ամերիկացի տարեց մարդ, ծննդեան օրն էր, սեղան բացել, սոնակահազնուել, սպասել որ գաւազները կը գային... Իրիկուան ժամերին սրտատրոփ սպասել, որ ահա գաւազները կը գային, կարօտել էր նրանց, կարօտել էր միասին ճաշել, կարօտել էր նրանց տեսնել, սիրել, սպասել էր մինչեւ ու ժամերին, չէ... քնել էր: Հապա եղա՞ւ: Արմին-հայը աւանդապաշտ է, երբեք նման բան:

Տարագիր Արմին-հայեր, փախել են երկրից, իշխանութիւնից, փախել դժխեմ «Անմարդ» մարդկանցից, երբեմն էլ իրենց արդարացնելու համար անտեղի լուտանք են թափում հայրենի երկրի վրայ: Ափսոս, որ Մեծն Սարոյանը չկար, եթէ ոչ Հայաստանի ծովից բերած բարդ գլխներին կը տար: Սարսափում եմ, երբ լրագրերում կարդում, որ գործատէրեր, ամիսներով չեն վճարում իրենց աշխատաւորների աշխատանքի արդիւնքը: Անօրէն մարդիկ, եթէ նրանք աշխատել են, ոչ միայն արդիւնք, այլ նաեւ յաւելեալ արդիւնք են ստեղծել: Անարգ մարդ, աշխատաւորի ստեղծած արդիւնքով քու մանչերին ես կերակրում, գործաւորը տուն մտնելիս իր ձեռքերին նայող մանչերին ինչ պիտի տար... պիտի գնար խանութից ապառիկով հաց ուզել: Միլիոնաւոր տոլար արժողութեամբ եկեղեցի ես պատում, որ ո՞ւմ համար աղօթեմ, մեղքերիդ թողութեան համար մոմ ես վարում, հաւատո՞ւմ ես, որ քու Աստուածը կը ների՞ քեզ, իմացի՞ր, քու պաշտամունքի վարապոյրից այն կողմի նախախնամութեան ուրուականը երբեւից կը պատժի քեզ: Մեծ բանաստեղծ Պոլշկինը ցարի գահը անիծեց, որ այն փլուէր,

Արմին-հայ մանուկներ անիծում են քեզ, անէծքը նրանց անեղծ է, վախեցիր:

Այդ տարագիր Հայ ընտանիքներից ոմանք տնտեսական բարւոք վիճակում չեն, հազար ու մէկ հոգսերի բեռ իրենց շալակներին, սակայն, դեռեւս չեն մարել իրենց Հայաստան երկրի նախնիների բարքերը: Հայը աւանդապաշտ է, մեծ մայրեր, մեծ հայրեր, հարսեր, մանչեր միասին էին ապրում: Մանկան անուշ ճիւղերով էր լցում տունը: Մեծ մայրերի եփած համով-հոտով կերակուրներն էին միասին ճաշկուտ: Հապա սոնակահա օրերին, տունն էր լցում իրենց խինդի բերկրանքի հրավառութեամբ: Փոքրիկ մանչեր նստում էին մեծ մայրերի ու հայրերի գոգերին, իրենց ձիւնոտ մատներով կերակրում նրանց: Զաւակների հոգսերը թեւեւանցնելու համար այդ տարեցները գնում են պետական տներում կամ վարձակալութեամբ առանձին ապրելու, հապա եղա՞ւ:

Արմին-հայ տարեց մարդ, գնա՛ շիւսիսային Հոլլիվուդի Օքսարդ փողոց, թիւ 10858, այնտեղ գովազդային խոշոր ցուցանակ կա՝ «BEST-Տարեցների Առողջապահական Խնամքի Կենտրոն»: Ծոցատետրում գրանցի՛ր գովազդի հեռախօսի թիւը, գանգահարիր «Մրագրի Տնօրէն» Նարինէ-ին: Յաջող օրուայ առաւօտ կանուխին, հեռաձայնիդ գանգը պիտի հնչէր, առաւօտեան բարի լոյսի մաղթանք չլիւրց չետոյ, պիտի խնդրուէիր մօտենալ դրսում կանգ արած ինքնաշարժին: Նրա մուտքի դուռն էր յուշիկ բացուում, կառավարը պիտի հրաւիրէր բարձրաբեր: Ներսի բերհար կանայք, տղամարդիկ բարի եկար են քեզ մաղթելու: Ինքնաշարժն էր տարբեր ուղղութիւններով վազում, ուրիշ այցելուներին էլ հրաւիրելու դէպի առողջապահական կենտրոն: Երկար է ճանապարհը, հոգ չէ, ինքնաշարժում տեղի ունեցած գրոյցներից, ժամանակը աւելի արագ է սահում:

Ինքնաշարժը կանգ է առնում կենտրոնի դարպասի առաջ, այցելուները կամացուկ քայլերով իջնում, նրանց դիմաւորում են կենտրոնի պաշտօնեաներ, ողջոյնում քեզ Միհր արեւ աստուծոյ արեւազարի լոյսի առաւօտեան շողերով, թեւանցուկ արած տանում տկար շարժողականութիւն ունեցող այցելուներին: Եթէ անձրեւում է, նրանք անձրեւանոցներ են պահում այցելուներին գլխավերելու: Դուն, դարբերի արհաւիրքներով անցած Հայ մարդ, բաց գլուխդ վեր պահած գնա՛ դէպի կենտրոնի մուտք, վայելիք նախնիներիդ Մովինար դիցուհու ջրերի հայկեան իմաստուն գլխիդ իջնելը, նրա շիթերի վազքում լսի՛ր Սասունի Մհերների գարմից Դաւիթի գարկերի հոնդիւնը, ունկնդրի՛ր անձրեւի շիթերի հետ տիեզերքի քու նմանների մրմունջի ձայնը . . . :

Մտի՛ր լոյսով լեցուն տունն այդ հայաբարբառ, Տես, ինչպէս են բազում ալեհեր արեւորդիներ, Կաթոգին ժպտում իրար, կանչում, ծիծաղում, Սասունի ձենով Օհանի նման հնչուն խօսում: Կեդրոնի սրահում ժամանցի ծրագրի իրականացման պատասխանատու՝ տաղանդաշատ Կարինէն, նստատեղ կ'առաջարկի քեզ: Կը տանի ներկայացնելու կենդ-

րոնի կառավարման սենեակներ՝ հանգստի սենեակ, մարմնի շարժողականութեան բարելաւման սրահ, նրա պատասխանատու Տիկին Հայկանուշը կ'ողջոյնի քեզ, կը ծանօթացնի տարբեր-տարբեր սարքերի հետ: Նրա կողքին մարմնի կարողականութեան բարելաւման սենեակի պատասխանատու, Մուսա Լեւոնու գարմից Տիկին Գոհարը կը բացատրի տարբեր սարքերից օգտուելու առաւելութիւնները: Կը գնաք կենտրոնի գործունէութեան վարման «Մրագրի Տնօրէն» Տիկին Նարինէի սենեակ, երբ կենդրոն յաճախել սկսես, պիտի գարմանաս նրա կազմած ինչպիսի՛ յախուռն ծրագրաւորմամբ է դեկավարում կենտրոնի տարբեր յատուածները գործունէութեան իրականացումը: Կարինէն քեզ կ'առաջնորդի «Ընկերային ծրագրերի Աշխատող»-ների սենեակ, Աննա, Գոհար, Քեթրինա հոգեբանութեան գիտութեան մասնագէտներ, յաճախ պիտի ունկնդրես նրանց հոգեբանական վերլուծութիւնների հետաքրքիր ու օգտաշատ խօսքը, ստացած գրութիւններդ ձեռքիդ պիտի մտնես նրանց աշխատատեղի, սիրալիր պիտի բացատրեն նրանց բովանդակութիւնները: Կողքին, հիւանդապահուհիների սենեակն է, Լուսինն, Սեղան, Արմինէն, Նարինէն են այնտեղ, դու անպայման պարտաւոր պիտի լինես ամէն առաւօտ մտնել իրենց մօտ՝ ստուգելու արեան ճնշումդ եւ նրանում շաքարի պարունակութեան տոկոսը:

Սրահում, Կարինէն, Ռոման ու Մարիթեան են: Հրաշալի Կարինէն «Հայր Մէր» Տէրունական աղօթքը կ'աւարտէ: Հայեր աղօթեցին, որ իրենց պաշտած Աստուածը հանապազօրեայ հաց տար իրենց, կերակուր պարգեւէր, չարիքից ազատէր, է՛հ, այն ոչինչ տուեց ու պարգեւեց Հայուն: Արմին-հայը ինքն է վաստակել մանչերի հացը

ու կերակուրը, իրենց մեծերը արօրի հետ գէնք չտուին նրան, ասացին հնազանդիւր տիրոջը, կուռի չտարան, տանուլ տուին իրենց ու իրենց երկիրն էլ, ափսոս եղեւ: Կարինէն օրուայ ծրագիրը կը թելադրի՝ մինչեւ ժամը ինն արեան ճնշման ու նրանում շաքարի ստուգում, նախաճաշ, ազատ ժամ, մարմնամարզութիւն, հանդիպում ընկերային ու առողջապահական աշխատողների հետ եւ իր կողմից վարուող խաղերի, մրցոյթների, յիշողութեան բարելաւման վարժութիւնների, տօնահանդէսների, գրողների յոբելեանների եւ վերջապէս բոլորի սիրելի երգ ու պարերի անցկացում: Դուն ազատ կը լինես սրահից դուրս գալու, պտտելու բակում, ծանօթնալու մասնակիցների հետ, դիտելու նրանց Բիլիարդի, Նարտի, Ճատրակի խաղերը: Դո՛ւն էլ մասնակցիւր խաղերին, պարսաւած հոգիդ կը հանգստանար: Տես, կենտրոնի անչափ բարի ու մարդասէր Տնօրէնն է, Նարտի խաղում մասնակիցների հետ, կը գար մօտը, կը բարեւուէր, «Բարի Գալուստ» կը մաղթէր: Որպէսզի յոգնութիւնդ մեղմի, քաղցրաւենիքով հայկական սուրճ կը մատուցեն, քեզ անուշ լինի հայկական համեղ ու բուրավէտ սուրճը: Շաբաթը մէկ օր քեզ կ'ընկերակցեն մօտակայ խանութից գնումներ կատարելու:

Կենտրոնի կառավարման վարչութեան պատասխանատու աշխատողներ՝ Քնարիկն ու Սիրանը, վերահսկում առանձին բաժինների աշխատանքի ու թիւը, նահանգում գործող օրէնքների համաձայն ուղղորդում կենտրոնի գործունէութիւնը, իրենց գիտելիքների ու երկարամեայ աշխատանքային փորձառութեան շնորհիւ նահանգային վերստուգիչներ դրական են գնա-

Շար.ը էջ 19

Հետաքրքրուած եմք իրենց փոխարժեքով ստանալ՝

- Հայկական երգարաններ
- Կիլիկիոյ պատմական գիրքեր
- Ցեղասպանութեան հետ առընչուած գիրքեր

Եթէ ունիք նման գիրքեր եւ կը փափաքիք զանոնք վաճառել, կը խնդրենք մեզի հետ կապ հաստատել հեռաձայնելով կամ e-mailով՝ **ՎԱՀԷ ԱԶԱՊԱՀԵԱՆԻՆ:**

Vahe Atchabahian
 1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104
Tel: 626-354-5924
 vamedia@yahoo.com



ՏԱԳՆԱՊՈՒՅԻՆ ՎԻՃԱԿԵՆ ԻՆՔՆԻՐԵՆ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԴԻՆԳ ՄԻՋՈՑՆԵՐ

Արդէն շատ ուշ է, բաւական ժամանակ է, որ կը փորձէք քննալ եւ չէք կրնար, կը մտածէք օրուան ընթացքին տեղի ունեցածներուն մասին, եւ սրտին մէջ տեսակ մը վախ կայ, անհանգստութիւն.... Կը կարծենք, որ նկարագրուածը ծանօթ է կամ կեանքի որեւէ փուլին հանդիպած է իւրաքանչիւրին: Յաճախ պատահող այս սթրեսային վիճակէն ազատիլ կարելի է շատ դիւրին ձևով:

Պէտք է պարզապէս քիչ մը աշխատիք դուք ձեր վրայ: Ահաւաստիկ հինգ ամենաարդիւնաւէտ միջոցները:

1. Դուք ձեզի բարձրաձայն աչքան անգամ պատմեցէք յուզող իրադարձութեան մանրամասնութիւնները, մինչեւ որ դառնայ ծիծաղելի եւ զգաք անիմաստութեան աստիճանը: Առձակատուր շատ լաւ տարբերակ է. ինդիրը կարծես կը հասկնայ, որ դուք այլեւս չէք վախնար իրմէ եւ կը սկսի նահանջել:

2. Պահ մը մտածեցէք, որ ամէն ինչ կրնար աւելի վատ ըլլալ:

Երբ գիտակցիք ատիկա, վերադարձէք իրականութիւն: Պիտի հասկ-

նաք, որ իսկական կատարուածը այնքան ահաւոր չէ, որքան դուք զայն կը դարձնէք ողբերգական, յատկապէս որ կիններուն համար ատիկա շատ բնորոշ է:

3. Յատք կատարեցէք ժամանակի մէջ: Երբ ամէն ինչ անյոյս կը թուի, փորձեցէք մտքով տեղափոխուիլ որոշ ժամանակ առաջ եւ հասկնալ, թէ կատարուածը ինչ նշանակութիւն պիտի ունենայ ձեզի համար, ըսենք, մէկ տարի յետոյ: Դուք պիտի զգաք՝ այն ինչ որ ցաւ կը պատճառէ այսօր, վաղը կրնայ ծիծաղ յառաջացնել:

4. Տաքնապի պահուն մի մոռնաք շնչառութեան մասին: Թուլնալու կարողութիւնը ձեր մէջ դաստիարակելու համար օգտակար կրնայ ըլլալ մտախոհութեան (meditation) ընկալարհը:

5. Թոյլ մի տաք, որ ինդիրները խանգարեն ձեզ ապրելու լիարժէքօրէն: Ամէն ինչ, որ կը խանգարէ ձեզ, յաճախ փոքրիկ, նոյնիսկ, աննշան բան մըն է: Թոյլ մի տաք, որ անիկա իսկ ձեր ապրելու ժամանակը, անիկա առանց այդ ալ շատ քիչ է:

Պատրաստեց՝ ՆԱՐԻՆԷ Ն.

ՈՐՈՇՔ ԿՐՆԱՆ ԱՄԵՆԵՆ ՇԱՏ ԱԶԴՈՒԻԼ ՄՇՏԱԿԱՆ ԸՆՇՈՒԱԾՈՒԹԵՆԵՆ

Նորագոյն հետազոտութիւններուն համաձայն՝ քանատացիներուն աւելի քան 23 առ հարիւր համեմատութիւնը խոստովանած է թէ կը տառապի լուրջ եւ մշտական ճշուածութեան (Chronic Stress): Անոնք նաեւ յայտնած են թէ ճնշուածութիւնը անոնց մօտ առկայ է գրեթէ ամէն օր: Մշտական ճնշուածութիւնը կը բարձրացնէ հոգեկան եւ ֆիզիքական առողջութեան վատթարացման վտանգը, սակայն ամէն մարդ չէ որ նոյն ձևով կ'ազդուի ճնշուածութեանն եւ կը կրէ անոր հետեւանքները: Ըստ մասնագէտներուն, կարգ մը մարդիկ կը յարմարին ճնշուածութիւն պատճառող կեանքի պայմաններուն, իսկ ուրիշներու պարագային՝ ճնշուածութիւնը կրնայ չափազանց վատ հետեւանքներ ունենալ:

Քանատացի մէջ գտնուող Քոնքորտիա Համալսարանի հետազոտական խումբը բարեբախտաբար յաջողած է յայտնա բերել թէ որոշ ամէնէն շատ հակամէտ են ազդուելու ճնշուածութեանն: Անոնց հետազոտութեան մասին անդրադարձած է Stress ամսագիրը, ըստ որուն քանատացի գիտնականները քննած են մասնակիցներուն ճնշուածութեան մակարդակը թէ՛ սովորական ուսման օրերուն եւ թէ՛ քննութիւններու ժամանակ:

Բնականաբար, քննութեան ժամանակ ուսանողներու մօտ կը բարձրանայ ճնշուածութիւնը: Նշենք, որ այս հետազոտութեան մասնակիցներուն թիւը հասած է 76-ի:

Հետաքրքրական է, որ գիտնականները ուսանողներու ճնշուածութեան մակարդակը քննելու համար հիմնականօրէն ուշադրութիւն դարձուցած են անոնց սրտի տրոփումները:

ՍՆՆԴԱԿԱՐԳԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԸ ԿՐ ՓՃԱՑՆԵՆ ՄԱՇԿԸ ԵՒ ՉԵՆ ԱԶԱՏԵՐ ԱԲԵԼՈՐԴ ԿՇԻՌՔԵՆ

Չուիցերիոյ սնունդի ուսումնարանի սննդագէտ Ամանտա Փէյն կը պնդէ, որ ցած ջերմութեամբ խմիչքները, փոխանակ լուծելու աւելորդ կշիռ քի ինդիրները, կը խորացնեն գանոնք եւ բացի այդ կը յառաջացնեն մաշկի արագ ծերացում:

Անոր ուսումնասիրութիւններուն իբրեւ արդիւնք պարզուած է, որ սննդագիտական խմիչքներու սիրահարները իւրապատու կ'առուցուածք ունին՝ փորի եւ գոտկատեղի վրայ աւելորդ ճարպային ծալքերով: Ասիկա կը վերաբերի նաեւ անոնց, որոնք կը նախընտրեն այնպիսի խմիչքներ, որոնց մէջ շաքարի փոխարինողները:

Ատիկա տեղի կ'ունենայ այն

րու փոփոխութիւններուն՝ երբ ուսանողները կը հանգստանային եւ երբ անոնք կը մտածէին մտահոգիչ դէպքերու մասին: Իսկ նախքան քննութիւնները, ինչպէս նաեւ քննութիւններու ժամանակ անոնք հետեւեցան ուսնողներու տրամադրութեան փոփոխութիւններուն:

Փորձարկումի ընթացքէն աւելի հետաքրքրական են անոր արդիւնքները, որոնք ցոյց տուին թէ ճնշուածութեանն ամէնէն շատ կրնան ազդուել այն անձերը, որոնց սրտի տրոփումները կայուն կը մնան մտահոգութեան ժամանակ: Այլ խօսքով՝ երբ մտահոգութեան ժամանակ անոնք սրտի տրոփումները քայլ չպահեն ուղեղին մէջ տեղի ունեցող հորմոնային փոփոխութիւններուն հետ, անձը կրնայ հետագային առողջապահական հարցեր դիմադրուել, ճնշուածութեան հետ չկարենալ յարմարելու հետեւաբով:

Հիմնուելով Քոնքորտիա Համալսարանի հետազոտութեան արդիւնքներուն վրայ կարելի է եզրակացնել թէ սրտի ճկունութիւնը կրնայ անհատին հոգեկան եւ ֆիզիքական առողջական վիճակը գնահատելու կամ գուշակելու գործօն մը ըլլալ:

Յստակ է, որ ճնշուածութեան կամ մտահոգութեան ժամանակ մարմնին համար աւելի նպաստաւոր է, որ սրտի տրոփումները անկայուն ըլլան: Բնականաբար, ճնշուածութեան պարագային սիրտը կը սկսի արագ տրոփել, որպէսզի յաւելեալ թթւածին (oxygen) հայթայթէ մարմնի մկաններուն եւ ուղեղին եւ միեւնոյն ժամանակ արագորէն դուրս հանէ մարմնին մէջ գտնուող յաւելեալ ածխածինի երկօքսիտի (carbon dioxide) քանակը:

ԻՆՉ ՕԳՏԱԿԱՐ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻ ԽԱՂՈՐԸ

1. Խաղողի հատիկները կը պարունակեն շատ շաքար եւ քրքմեղ (Galium): Խաղողն ու անկէ պատրաստուած հիւթը կը բարելաւեն մարմնի ջուր-աղային փոխանակութիւնը, որուն իբրեւ արդիւնք մարմինը կը մաքրուի միզաթթուէն:

2. Խաղողը օտուած է միզամուղ յատկութեամբ: Բացի այդ, լալթուցնող ու քրտնամուղ ազդեցութիւն կ'ունենայ մարմնին վրայ: Լալ միջոց է երիկամներու եւ միզաքարային հիւանդութիւններու, ինչպէս նաեւ փորկապոլիւններու պարագային:

3. Կ'օգնէ կարգաւորելու զարկերակային ճնշումը:

4. Կը նպաստէ քոլեսթերոլի մակարդակի նուազեցման ու սրտամկանի ուժգնութեան բարձրացման:

5. Խորհուրդ կը տրուի սակաւարիւնութեան պարագային, Չղային ու ֆիզիքական հիւծման, յատկապէս

կենսանիւթատապի կամ ալ ապաքինման ժամանակ, քանի որ կը պարունակէ շաքար մը կենսանիւթերու հանքային նիւթեր:

6. Շատ օգտակար է պրոնչիթով, ասթմայով ու թոքախտով հիւանդներուն. կ'օգնէ շնչուղիներէն լորձի հեռացման:

7. Մուգ գոյնի պտուղներուն մէջ p-active նիւթերու՝ պիոֆ - լաւոնոլիտներու պարունակութիւնը աւելի շատ է, քան բաց գոյնի տեսակներուն մէջ: Անոնք կը նպաստեն սիրտանօթային համակարգի ամրապնդման: 8. Խաղողը կը պաշտպանէ մաշկը կնճիռներու յառաջացումէն, շրջակայ միջա-վայրի վնասակար գործօններու ազդեցութեանն՝ պահպանելով մաշկի թարմութիւնը ու երիտասարդութիւնը: Խաղողին կը պատրաստեն հիւթ, անուշ, գինի եւ այլն: Իւրաքանչիւր վիճակի մէջ անիկա բարերար ազդեցութիւն ունի մարմնին վրայ:

ԻՆՉՊԵՍ ԴԱՆԳՍԱՑՆԵԼ ՋԻՂԵՐԸ ԲԱՆԻ ՄԸ ԱՐԴԻՒՆԱԿԵՏ ՄԻՋՈՑՆԵՐ

Ամենապարզ կանոնը: Հաշուեցէք մինչեւ տասը: Ասիկա ամենապարզ ու տարածուած կանոնն է, որ կ'օգնէ ակնթարթօրէն հանգստացնելու ջիղերը: Ինչպէս նաեւ, հետեւեցէք ձեր շնչառութեան: Ծնչեցէք դանդաղ եւ խոր: Յանկալի է նաեւ շնչառութեան հետեւի այս բառերով՝ շունչ, հանգիստ, արտաշունչ: Կը հանգստացնենք ջիղերը թարմ օդի միջոցով: 10 վայրկեան տեւողութեամբ զբօսանքը մաքուր օդի մէջ կրնայ կախարդական ազդեցութիւն ունենալ ձեր ջիղային համակարգին վրայ: Ձեր մէջը կուտակուած բացասական յոյզերն ու ուժը փոխանցեցէք բնութեան: Ձեռքերով դպչեցէք ծառերուն, անոնց «պատմեցէք» ձեր ինդիրները, մտահոգութիւնները եւ լեցուցեցէք դրական ու առողջ ուժով: Ամէնօրեայ վազքն ու զբօսանքը մաքուր օդի մէջ կը բարելաւէ ձեր ջիղային համակարգը: Յատկապէս օգտակար է մաքուր օդի մէջ զբօսնել քնանայլ առաջ. ասիկա

պիտի ապահովէ ձեր առողջ ու խոր քունը: Առողջ ու լիարժէք քունը ամենալաւ դեղն է: Ոչինչ ըրէք ձեր քունի հաշտին: Առողջ քունը առողջ ջիղային համակարգ ունենալու առաջին նախապայմանն է: Երբ կը զգաք, որ ամէն ինչ դէպի վատը կ'երթայ, պարզապէս քնացէք: Ասիկա պիտի օգնէ կատարուածին այլ աչքերով նայելու:

Երաժշտութիւն: Երբ ջիղերը ծայրայեղօրէն լարուած են, խորհուրդ կը տրուի երաժշտութիւն լսել: Պարտադիր չէ, որ անիկա դասական ըլլայ, թէեւ դասական երաժշտութեան ազդեցութիւնը անհամեմատ աւելի ուժեղ եւ առողջարար է:

Լսեցէք ձեր սիրելի երաժշտութիւնը, դարձէք երաժշտութիւն, որոշ ժամանակով կտրուեցէք ձեր ինդիրներէն:

Ծիծաղը կրնայ հրաշքներ գործել: Ծատ կարեւոր է նոյնիսկ ամենալարուած ու ջիղային վիճակներու

վիճակի մէջ էք, ընդունեցէք հանգստացնող իւղերով լողանք: Միայն ջուրը արդէն իսկ բաւական է փրկուելու համար բացասական ուժերէն:

Հետաքրքրական խօսակցութիւն: Խօսակցութեան, չիման միջոցով դուք կրնաք ոչ միայն հանգստացնել լարուած ջիղերը, այլեւ հասկնալ դուք ձեզ, ձեր ինդիրը տեսնել այլ լոյսի տակ:

Չոգեբանները յաճախ կը դիմեն նոյնիսկ խօսակցութեան միջոցով բուժման օգնութեան: Մարդը, քանի մը անգամ պատ մեղով իր ինդիրը, կը սկսի զայն ընկալել ուրիշ կերպով, լուծումներ գտնել:

ՓԱԹԵԹԱՅԻՆ, ՓՈՒԼԱՅԻՆ ԵՒ ՄՈՌԱՑՈՒԱԾ ՊԱՋԵՐ

Շարունակուած էջ 6-էն

Տէր-Պետրոսեանը ապշած էր: Առաջին անգամ էր, որ ԼՂ ղեկավարութիւնը ինքն իր ներքին գործընթացներով հասել էր այնտեղ, որտեղ էր Հայաստանը: Տէր-Պետրոսեանը խնդրեց, որ Պետրոսեանը կրկնի իր ասածը: Լեոնարդը կրկնեց: Այնուհետեւ Տէր-Պետրոսեանը խնդրեց, որ Ղուկասեանն ու Բաբայեանը, անկախաբար Պետրոսեանից, յայտնեն իրենց կարծիքը: Ղուկասեանն ու Բաբայեանը հաստատեցին Լեոնարդի խօսքերը: Տէր-Պետրոսեանը նայեց շուրջը՝ տեսնելու, թէ արդեօք միւսներն էլ նոյն բանն են հասկանում այդտեղ կատարուածից, ինչ՝ ինքը:

Յետոյ ՀՀ Նախագահը շարունակեց իր խօսքը, որը հետեւեալն էր. «Ուրեմն, վստահ լինենք, որ բոլորս էլ հասկանում ենք, թէ ինչ է նշանակում փուլային լուծումը. վերադարձնում ենք ԼՂ-ից դուրս մեր հակակշռի տակ գտնուող 7 տարածքներից 6-ը, Լաչինը պահում ենք: ԼՂ-ը պահում է իր բոլոր ռազմական կարելիութիւնները. վերադարձրած տարածքների վերաբերեալ ապահովում ենք առաւելագոյն անվտանգութիւն ԼՂ համար՝ ե՛ւ ռազմական, ե՛ւ միջազգային քաղաքական տեսակէտից: Պատերազմն աւարտուում է, խաղաղութեան պայմանագիր ենք ստորագրում Ատրպէյճանի հետ: Կարգավիճակի հարցը թողնում ենք յետագայի բանակցութիւններին: Այսինքն, տարածքներ՝ խաղաղութեան համար, եւ ոչ՝ կարգավիճակի»:

Տէր-Պետրոսեանը հարցրեց ԼՂ երեք ղեկավարներին՝ արդեօք փուլայինով նոյն բանն ենք հասկանում: Երեքն էլ դրական պատասխան տուեցին: Ապա Տէր-Պետրոսեանը դարձաւ միւսներին. «Բոլորդ հասկանում եք, թէ ինչ կատարուեց այստեղ: Հրադադարից ի վեր առաջին անգամ է, որ ԼՂ-ը եւ ՀՀ-ը լիովին համաձայն են խնդրի լուծման ձեւին: Գնում ենք փուլայինով ու բոլորս էլ հասկանում ենք, թէ դա ինչ է նշանակում: Այստեղ կա՞յ որեւէ մէկը, որը համաձայն չէ այս գործընթացին»: Նա՝ երկու, թերեւս, երեք անգամ հարցրեց. «Որեւէ մէկը խնդիր ունի՞ այս մօտեցման կապակցութեամբ»:

Ոչ ոք չառարկեց կամ խնդիր չներկայացրեց՝ բացի Բաբայեանից, որը վերջում որոշ տատամտումից յետոյ հարցրեց. «Չե՞նք կարող Քեյլբաջարի էլ պահել»: Նա արդէն ոտքի էր կանգնել ու յետեւի Քոչարեանի աթոռի թիկնակին: Քոչարեանը դարձաւ դէպի Բաբայեանը (նա չէր կարող վերջինիս ուղիղ նայել, քանի որ այդ դիրքում անհրաժեշտ էր գլուխը շրջել 180 աստիճանով) եւ ասաց. «Է՞նչ ես, ի՞նչ ես, ա՛յ տղայ, Լաչինը դեռ չենք մարսել, հիմա Քեյլբաջարն էլ ես ուզում»:

Տէր Պետրոսեանը ընդմիջեց. «Մի րոպէ, Ռոբերտ ջան»: Դարձաւ ինձ. «Ժիրայր, կարո՞ղ ես բանակցութիւններում Քեյլբաջարը եւս պահել»: «Վստահ չեմ, կարող եմ փորձել: Մինչեւ հիմա գնում ենք «6+1» ձեւաչափով, երբ խօսում ենք փուլային լուծման մասին: Վեցը տալիս ենք, մէկն ենք պահում: Չեմ կարծում, թէ դա կարելի է «5+ 2»-ի հասցնել, սակայն կարող ենք «5+1+1» ձեւաչափին հասնել. 5-ը տալիս ենք, 1-ը պահում ենք, 1-ն էլ «Ժամանակա-

ւոր» պահում ենք, յետոյ կը տեսնենք»,-ասացի:

«Այդ պատասխանը քեզ գոհացնում է, Սամօ»,-հարցրեց ՀՀ Նախագահը: «Եթէ ժիրայրն է դա ասում, այո՛, գոհացնում է»,- ժպտալով ասաց ԼՂ Պաշտպանութեան նախարարը: Նախագահը դարձաւ ինձ. «Քո կարծիքով սրա հիման վրայ որքա՞ն ժամանակից կարող ես խաղաղութեան պայմանագիրը բերել: Երեքից չորս շաբաթը բաւարար է»: «Ո՛չ, պարոն նախագահ. 4-6 շաբաթ պէտք է նկատի ունենալ»:

Դրանով աւարտուեց հանդիպման այդ մասը: Ես գնացի իմ սենեակ ու սկսեցի աշխատել մի փաստաթղթի վրայ, որը կարելի էր անպաշտօն ու խորհրդապահական ներկայացնել Մինսկի խմբին՝ որպէս հիմք մի նոր, փուլայինի վրայ հիմնուած ԵԱՀԿ առաջարկի: Դրանից յետոյ եղած պատմութիւնը նոյնպէս չեմ մանրամասնում այստեղ, սակայն կը ներկայացնեմ մի քանի դիտողութիւններ:

ՂԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀՀ նախագահի ամփոփած մօտեցումների ու այդ հանդիպման ներկաների կողմից ընդունուած հիմքի վրայ տեքստ պատրաստուեց, հսկայական աշխատանք կատարուեց կարեւոր մայրաքաղաքներում այն ներկայացնելու համար, հսկայական քաղաքական դրամագլուխ ներդրուեց այդ գործընթացի համար: Ի վերջոյ, Երեւանն ու Ստեփանակերտը միմիանցից անկախ չանգել էին նոյն եզրակացութեանը: Այդ հանդիպման հիման վրայ Երեւանում պատրաստուած տեքստն էր սկզբնօրինակը 1997-ի Սեպտեմբերի ԵԱՀԿ առաջարկի, որը Տէր-Պետրոսեանը ընդունեց որպէս բանակցութիւնների հիմք:

Մեր պատրաստած տեքստի դրոյթները, անշուշտ, ենթարկուեցին Մինսկի խմբի համանախագահների վերախմբագրմանը՝ ըստ իրենց ներքին բանակցութիւնների տրամաբանութեան, որի հետեւանքով ԵԱՀԿ այդ առաջարկի մէջ տեղ գտան դրոյթներ, որոնք մեզ համար վիճելի կամ անընդունելի էին: Երեւանը, ԵԱՀԿ առաջարկը բանակցութիւնների հիմք ընդունելով հանդերձ, միաժամանակ, ԵԱՀԿ ներկայացրեց մի հիմնաւոր փաստաթուղթ, որում թուարկել էինք այն կէտերը, որոնք պէտք է բանակցութեան առարկայ լինէին:

Սակայն 1997-ի Սեպտեմբերի առաջարկն իր էութեամբ համապատասխանում էր Յունիսի 14-ի հանդիպման ընթացքում ՀՀ նախագահի կողմից յստակեցուած սկզբունքներին: Սկզբունքներ, որոնց համաձայնել էր ԼՂ ղեկավարութիւնը եւ ոչ մի առարկութիւն չէր արել ՀՀ ղեկավարութեան որեւէ անդամ: Այդ նոյն մօտեցումն էր, որ ԼՂ նոյն ղեկավարութիւնը, Քոչարեանն ու Վազգէն Սարգսեանը, եւ վերջում՝ Սերժ Սարգսեանը մերժեցին: Նրանք պնդեցին լուծման փաթեթային տարբերակը եւ, ի վերջոյ, հասցրին Տէր Պետրոսեանի՝ ՀՀ նախագահի պաշտօնից հրաժարմանը:

Ինչպէ՞ս մեկնաբանել այս զարգացումները եւ ի՞նչ դասեր քաղել անմիջական դերակատարների ու միջնորդների վերաբերմունքից: Սա թողնում եմ ընթերցողի եւ պատմաբանների դատողութեանը: Այսօր իմ նպատակն էր փաստը ներ-

կայացնել նախքան այդ փաստի կորուստը՝ որեւէ պատճառով: Այդ հանդիպմանը մասնակցած տասը հոգուց երկուսը արդէն չկան, սպանուած են Վազգէնն ու Լէոնարդը: Միւսները կամայ թէ ակամայ կարող են մոռացած լինել, կամ իրենց համար այնքան էլ կարեւոր չէր այդ հանդիպումը: Որքան տեղեակ եմ՝ մասնակիցներից որեւէ մէկը այդ հանդիպման մասին մինչեւ հիմա չի գրել, ոչ էլ հրապարակաւ արտահայտուել է:

...Ժամանակի ընթացքում կորցրել ենք ու տակաւին կորցնում ենք այն, ինչ կարող էինք ստանալ: Այն, ինչ սեղանի վրայ է այսօր՝ ԵԱՀԿ/Մադրիդեան սկզբունքներով (կամ նրան յաջորդող նոյնանման տարբերակներով) թէ գուտ ուսական ներշնչմամբ, աւելի լաւ չէ, քան 1997-ի Սեպտեմբերի առաջարկութիւնը: Այն պնդումները, թէ Մադրիդեան սկզբունքները աւելի լաւն են, քան 1997-ի Սեպտեմբերի փաստաթուղթը կամ նախկինում ներկայացուած միջազգային որեւէ առաջարկ, նման յայտարարութիւնների հեղինակների վարկը փրկել փորձող գործարք են կամ քաղաքական կամաւոր կորուստիւն: Առանց անգամ առաւել չափով մանրամասնութիւնների մէջ մտնելու, ակնյայտ է, որ «97»-ով ԼՂ եւ Լաչինի ամբողջական տարածքը պահում էինք մեր հակակշռի տակ: Իսկ երբ այդ փաստաթղթի կապակցութեամբ բանակցութիւնները յաջող աւարտուէին, դա պիտի հաստատուէր ԵԱՀԿ եւ դրանից յետոյ՝ ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհրդի կողմից:

Այդպիսով՝ ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհուրդն ու, նոյնիսկ որ աւելի կարեւոր է, Հայաստանը դառնում էին փաստաթղթի դրոյթների երաշխաւոր, իսկ փաստաթուղթը վերածուում էր միջազգային իրաւունքի համագործակցութեան: 1997-ի Սեպտեմբերի առաջարկութեամբ կարգավիճակի եւ Լաչինի խնդիրը թողնում էինք ապագային, այսինքն՝ այդ տարածքներում պահպանում էր այդօրեայ, այդպահի կարգավիճակը: Մինչդեռ Մադրիդեան փաստաթղթով հայկական վերահսկողութեան տակ էր մնում ոչ թէ Լաչինի ամբողջ տարածքը, այլ միայն միջանցքը: Իսկ դրան հետեւող տարբերակների մէջ Լաչինը չանձնում ենք ինչ-որ անորոշ «միջազգային» ուժի եւ վստահ չենք, թէ ո՞վ է լինելու այդ տարբերակներում և շուրջ սկզբունքների շուրջ կայանալիք որեւէ համաձայնութեան երաշխաւորը, եւ այդ հանգրուանում ո՞րն է լինելու ՀՀ դերը:

Ի դէպ՝ 1997-ի Դեկտեմբերին Կոպենհագենում տեղի ունենալիք ԵԱՀԿ նախարարական հանդիպմանը Ղարաբաղի պատուիրակութեան մասնակցութիւնն ապահովելու համար Մինսկի խմբի համանախագահները մեզ գրաւոր տեղեկացրել էին, որ պատրաստ են երկրորդ փուլ տեղափոխել նաեւ Քեյլբաջարի հարցը: Այդ հանդիպման եզրակացութեան միակ առարկութեան խնդիրը՝ Քեյլբաջարի հարցն էլ լուծուեց ի նպաստ մեզ: Սակայն դա էլ չգոհացրեց ԼՂ ղեկավարութեանը: Մտածելու բան է:

Նոյնքան կարեւոր է հետեւեալ կէտը: Լսաւ 1997-ի Սեպտեմբերի փուլայինի վրայ հիմնուած ԵԱՀԿ առաջարկի՝ Ղարաբաղի վերջնա-

կան կարգավիճակի հարցը լուծելու համար պիտի ստեղծուէր Հայաստան-Ատրպէյճան-Ղարաբաղ եռեակից կազմուած յանձնաժողով: Այսինքն՝ ԼՂ-ը պիտի ունենար վետոյի իրաւունք: Դա կը լինէր ԼՂՀ ղեկավարութեան, Ազգային ժողովի թէ հանրաքուէի միջոցով, ԼՂՀ որոշելիքն էր: Մադրիդեան կամ դրան հետեւող այլ փաստաթղթերում նշուած սկզբունքներում աւելացել է ԼՂ ինքնորոշման իրաւունքը հաստատող այս կամ այն տարբերակող տերմինը, որի իսկական իմաստը չգիտենք. երբ կողմերը չեն կարողացել ճշտել, թէ այդ իրաւունքը ում է վերաբերում, թէ որ կողմը ինչ է հասկանում այդ լուծումից, վաղ է ասել՝ դա լա՞ւ բան է, թէ՞ ոչ:

Կան նաեւ այլ տարբերութիւններ՝ Մադրիդեան սկզբունքների ու 1997-ի Սեպտեմբերի առաջարկութեան միջեւ, սակայն սա այն տեղը չէ, ուր այդ վէճը պէտք է ծաւալուի: Միաժամանակ, այդ հիմնական տարբերութիւնները նշելը անհրաժեշտ էր այստեղ:

Անշուշտ, շատ բան է փոխուել այս 20 տարուայ մէջ, սակայն չի փոխուել Տէր-Պետրոսեանի՝ «Պատերազմ, թէ՞ խաղաղութիւն. լրջանալու պահը» յօդուածում ներկայացրած տրամաբանութեան ուժը: Վկայ՝ 2016-ի ապրիլի քառօրեայ պատերազմը: Իսկ փոփոխուած իրականութիւնների մէջ չպիտի մոռանալ Հայաստանից շարունակուող արտագաղթը, լուրջ եւ հիմնաւոր տնտեսական աճի պակասը եւ այլ կարեւոր չափանիշներ, որոնք աւելի յստակ են դարձնում այդ յօդուածի տրամաբանութիւնը: Այս՝ մօտ 20 տարուայ ընթացքում ոչ մի հիմնական հարց չի լուծուել:

Մի հարց կայ, որը յաճախ բարձրացրել եմ. ԼՂ եւ ՀՀ համար կարեւոր է լուծել Ղարաբաղեան հարցը, դա կարելի՞ է լուծել՝ ստանալով մեզ համար անհրաժեշտը եւ ոչ ցանկալին, քանզի ցանկալին պնդելով կարող ենք կորցնել անգամ մեզ անհրաժեշտը:

Վերջին նկատողութիւն: Գիտեմ, որ կան մարդիկ, որոնք տարբեր պատճառներով պիտի չցանկանային տեսնել յիշատակածս հանդիպման մասին որեւէ հրապարակում: Այդ պատճառների մի մասը կարող է լինել նաեւ լուրջ: Կան մարդիկ, որոնք գուցէ մտածում են, թէ նման հրապարակումը, մանաւանդ այս պահին, կարող է այս կամ այն կերպ վնասել որեւէ գործընթաց, որեւէ քաղաքական դէմքի կամ ուժի: Առանց վիճաբանութիւնների մէջ մտնելու կարող եմ ասել հետեւեալը. եթէ մեր գործընթացները, դէմքերն ու ուժերը այնքան փխրուն են, որ չեն կարող դիմանալ պատմութեան այս կամ այն փաստին՝ հին թէ նոր, դատապարտուած են ձախողման ու այդ հարցում իմ օգնութեան կարիքը չունեն:

Ամէն գործիչ պատասխանատու է իր արածի եւ չարածի, ասածի եւ չասածի համար, մանաւանդ, երբ այդ շարքից որեւէ հանգամանք ազդեցութիւն է թողել մեր երկրի քաղաքականութեան, ապագայի, պատմութեան եւ, ի վերջոյ, մեր ժողովրդի բարօրութեան վրայ:

ԺԻՐԱՅԻՐ ԼԻՊԱՐԻՏԵԱՆ
1991-1997 թ. ՀՀ նախագահի աւագ խորհրդական, պատմաբան, դիւանագէտ, պրոֆեսոր

ՍԱՐԱԶԴ



ԵՂԻՍԱԲԷԹ ՍԻՍԼԵԱՆ Ծնեալ Փետրուար 1931ին

Սրտի դառն կակիծով կը գուժենք մեր սիրեցեալ քրոջ եւ հարազատին՝ ԵՂԻՍԱԲԷԹ ՍԻՍԼԵԱՆի մահը, որ պատահեցաւ Ուրբաթ, Յունուար 27, 2017ին:

Յուզարկաւորութեան արարողութիւնը տեղի պիտի ունենայ Հինգշաբթի, Փետրուար 2, 2017, կէսօրէ ետք ժամը 1:00ին, Սուրբ Գէորգ Եկեղեցւոյ մէջ, 1434 West Kenneth Road, Glendale, CA 91201: Թաղման կարգը Forest Lawn Hollywood Hills 6300 Forest Lawn Drive, Los Angeles, CA գերեզմանատան մէջ, ժամը 2:00ին:

- Սգակիրներն են՝
Եղբայրը՝ Տէր եւ Տիկ. Աւագ եւ Լուսին Սիւլեան եւ զաւակները Իրենց ընտանիքներով (Լիբանան)
Քոյրը՝ Տէր եւ Տիկ. Սահակ եւ Անահիտ Գթըֆեան
Քրոջ զաւակները՝
Տէր եւ Տիկ. Գրիգոր եւ Նէլլի Գթըֆեան եւ զաւակները (Ուաշինկթըն)
Տէր եւ Տիկ. Ժիրայր եւ Ճօտի Գթըֆեան եւ զաւակը (Քոլորադո)
Տէր եւ Տիկ. Թոնի եւ Ալին Գարագաշեան եւ զաւակները
Տէր եւ Տիկ. Վահան եւ Սիրվա Մուրատեան
Տէր եւ Տիկ. Շահէ Մուրատեան (Քանադա)
Տէր եւ Տիկ. Հրաչ եւ Սալբի Ազատեան եւ զաւակները (Քանադա) եւ համայն Սիւլեան, Գթըֆեան, Գարագաշեան, Մուրատեան, Ազատեան եւ Վալթեան ընտանիքները եւ հարազատները:

2017 ՅԱՅՈՒՆ «ՎԵՐԱՆՈՐՈՎՈՒՄԻ» ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒ

Շարունակուած էջ 14-էն

բայց նաեւ կը դառնայ... Առաքեալ: Եւ կը վերանորոգէ միւս հայր: Ու բոլոր միասին կը վերանորոգեն հայկական հաւաքական կեանքը:
Եւ ասիկա հայուն վերանորոգումի գործընթացն է, ուր իւրաքանչիւր հայ կը վերանորոգուի եւ կը վերանորոգէ: Հայ անհատը եւ նաեւ՝ հայկական հաւաքականութիւն(ներ)ը:
Օգտագործուած աղբիւրներ Արամ Ա. կաթողիկոս, «Վերանորոգումի տարի», 2017: Կաթողիկոսութիւն Հայոց Մեծի Տանն

Կիլիկիոյ, Անթիլիաս, Լիբանան, 2017:

Jesse N. K. Mugambi and Michael R. Guy, Contextual Theology Across Cultures (Nairobi: Action Publishers, 2009).
Walter Brueggemann. The Prophetic Imagination (Minneapolis: Fortress Press, 2001).
Naim S. Ateek, «A Palestinian Perspective: Biblical Perspectives on the Land», in Voices from the Margins, ed. R.S. Sugirtharajah (London: Orbis Books, 1995).
Joan Delaplane, «A Future Full of Hope», The Living Pulpit (January-March 2012).

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ 2017 Թ. ՍԿԶԲԻՆ

Շարունակուած էջ 13-էն

հարստութիւն զգանք այն օգտագործելիս:
Լեզուի հարցի կողքին դեռ չլուծուած է մնում նաեւ անկախ Հայաստանի հիմնի հարցը:
Խորհրդային Միութեան պարտադրուող օրէնքների կողքին, Խորհրդային Հայաստանը զարգացաւ տնտեսութեան բոլոր բնագաւառներում. աննախադէպ վերելք ապրեցին գիտութիւնը, արուեստը, երաժշտութիւնը՝ հարստացնելով միջազգայինը հայկական նորանոր գոհարներով, որոնք իւրաքանչիւր հայի հպարտութիւնն են, որտեղ էլ նա ապրելիս լինի: Այդ գոհարներից մէկն էլ Խորհրդային Հայաստանի հիմնի երաժշտութիւնն է՝ գրուած հայ աշխարհահռչակ երգահան (կոմպոզիտոր) Արամ Խաչատրեանի կողմից 1944 թ., որը գոյատեւեց մինչեւ 1991 թ.՝ մինչեւ անկախ Հայաստանի Հանրապետութեան հռչակումը:
Տարիներ առաջ, երբ պրն. Հենրիկ Անասեանը մի քանի բաւեր փոխելով ներկայացրեց Խորհրդային Հայաստանի հիմնը, այն վերականգնելու առաջարկով որպէս անկախ Հայաստանի Հանրապետութեան հիմն, ժողովրդի կողմից այն ընդունուեց մեծ ոգեւորութեամբ, եւ սպաւում էր, որ շուտով հարցը կը քննարկուի կառավարութեան կողմից ու դրական լուծում կը ստանայ: Բայց երկար տարիներ անցան, «սայլը տեղից չշարժուեց»: 2016 թ. Մայիսին պրն. Անասեանը կրկին անդրադարձաւ այդ հարցին իր «Այս անգամ միանգամայն լուրջ էլի, նորից,

կրկին ու վերջնական» յօդուածով (տե՛ս «Մասիս», Շաբաթ, Մայիս 28, 2016, էջ 14): Սոցն յօդուածում պրն. Անասեանը փաստեր է ներկայացնում, որ անկախ Հայաստանի ներկայ հիմնը՝ Միքայէլ Նալբանդեանի «Թշուառ անտէրը» «Ազատ անկախ»-ի փոխուածի երաժշտութիւնը Գլխավորնովի «Ռայմոնդա» բալետի երաժշտութեան մէջ հնչում է նոյնութեամբ...:
Հայաստանում տիրող անառողջ միջավայրից հիասթափուած, պրն. Անասեանը վերջին անգամ փորձում է սթափեցնել, թմբիրից արթնացնել համապատասխան պատասխանատուներին, որպէսզի նրանք վերականգնեն Խորհրդային Հայաստանի գոհարական երաժշտութեամբ հիմնը որպէս անկախ Հայաստանի հիմն...:
2017 թ. լինելու է անակնկալներով լի տարի: Հայը շատ բարեփոխումներ է սպասում այս տարում Հայրենիքում: Յոյսով լինենք, որ դրանցից մէկն էլ մեր ժողովրդի կողմից սիրուած ու սրտին մօտ՝ Խորհրդային Հայաստանի հիմնի, Հանրապետութեան հրապարակի լաւագոյն գոհարներից մէկի՝ պատուանդանի (ամբիոնի) վերականգնումը կը լինեն, ինչպէս նաեւ յօդուածում նշուած բազմաթիւ հարցեր իրենց լուծումները կը ստանան...:
2017 թ. թող խաղաղութիւն բերի աշխարհին, մեր Հայրենիքին՝ բարելաւելով ժողովրդի սոցիալական վիճակը, որպէսզի ընդմիշտ մոռացուի արտագաղթի ուրուականը եւ հօրաքուէն Հայաստանի ու Արցախի բանակները՝ ապահովելով ժողովրդի անվտանգութիւնը:


«ՍԱՆԿԱՊԱՐՏԵԶ...»

Շարունակուած էջ 16-էն

հատում կենդրոնի գործունէութիւնը:
Վերադարձի՛ր սրահ, ունկնդրի՛ր «Ծրագրի Տնօրէն»-ի, հիւանդապահուհիների ու «Ընկերային Աշխատողներ»-ի, հետաքրքիր զեկուցումները՝ հոգեբանական ու առողջապահական հարցերի մասին: Լսի՛ր Կարինէի պատրաստած հետաքրքիր նորութիւնները, մասնակցի՛ր նրա վարած լիչողութեան բարելաւման ու մտային վարժանքներին, գիտելիքներին մրցումներին: Պիտի տեսնես տօնական օրերի նրա բեմականացումները, Հայոց մեծերին նուիրուած շնորհահանդէսները, հոգիդ պիտի լցուի նրանց խանդաղատանքով: Երգեր են հնչում, «Թանկօ» պարի եղանակներ, տղամարդիկ պարի հրաւիրում տիկնանց, իրար զրկած, անէացած պարում, նայի՛ր նրանց դէմքերի լոյսին, ակներից հոսած կրակի բոցերին, մտքի սաւառումին, կարծես իրենց հարսանեկան պարի, իրենց կարօտած սրտերի հէքիաթի յուշն է, Կարինէն զարկում է դաշնակի ստեղծներին, պարի հայ եղանակներ, խելայեղ պարում են, կարմրում են յուշերի լոյսից, կարծես դիմացնին իրենց հարսնացուն կամ փեսացուն է, ինչքան անուշ է յիշել, թող յիշեն իրենց կեանքի լոյսը:

է հեյ Հայոց հին աստուածներ՝ բարի ու գորովալից, Ձիւն բերէք ինձ Արարատի սիգապանծ զագաթից, Յանեմ դէմքերին այս ալեհեր տիկնանց ու քաջերի, Որ հովանան նրանց հոգիները արեւավար կարօտի:
Ժամը 12-ին «Բիւնկո» խաղ: Խաղաքարտի վանդակները լրիւ փակողներին նուէրներ, այն հաճելի է, նշանակութիւն չունի արժէքը, Քլինտոնը սիրուհուց փողովակ էր նուէր ստացել, ուրախ էր: Ժամը մէկին ճաշ: Խոհանոցի աշխատողներ՝ Հոնիփսիմէն, Մանիկը, իրենց օգնող սրահի աշխատողների հետ, քոյր կենդրոնում եփած, մաքուր սկուտեղների վրայ շարուած, համեղ ձաշեր են քեզ մատուցում՝ առաջին, եկրորդ, հիւթեր, չէ, այն չեմ նկարագրելու, երբ շուտով որպէս այցելու գաս, պիտի համոզուես՝ դրան եւ իմ բոլոր պատմածներին: Բարի ճանապարհ մղթելով, տուն ճանապարհում : Վարորդն է հարցնելու՝ «Վաղը գալու՞ ես... իմ այսքան պատումից յետոյ երեւի «ԱՅՈ» պիտի ասես:
Ես այս գրեցի որպէս լրագրական հրատարակում եւ ոչ թէ կենդրոնի ղեկավարութեանը հաճոյանալու հրատարակում: Շրջանի նման բոլոր «Առողջապահական Կենդրոններ»-ը ուրախ են լինում նոր այցելուներ ընդունելու:

ԼՈՅՍ ՏԵՍԱԲ
Յայտնի արձակագիր
ՍԱՐԳԻՍ ՎԱՐԱԳՆԻ
Շքեղակազմ նոր հատորը՝
«ԾԱՂԿԱՔԱՂ Պատմութիւններու»
Յրատարակութեամբ՝ Թեքեան
Մշակութային Միութեան
Ստանալու համար դիմել՝
«Ապրիլ», «Սարդարապատ»
«Պերճ» գրախանութները
Կամ հեղինակին՝
Sarkis Vahagn
8067 Shadyglade Ave.
North Hollywood, CA 91605
Tel. 818-504-1946
Email:sarkisvahagn@yahoo.com



ՅԵՆՐԻՆ ՄԻԻԹԱՐԵԱՆ. ԱՄԷՆ ԻՆՉ ԼԱԻ ՍՏԱՅՈՒԵՑ



«Մանչեսթեր Շոունայթրդի» եւ Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրի Միթարեանը մեկնաբանել է 4:0 հաշուով յաղթանակը «Ուիգանի» նկատմամբ Անգլիայի գաւաթի խաղարկութեան 1/16 եզրափակիչում եւ յաջորդ փուլ դուրս գալը:

«Ամէն ինչ լաւ ստացուեց: Մեր լաւագոյն խաղը չէր, յատկապէս, առաջին խաղակէստում, բայց ընդմիջումից յետոյ աւելացրինք: Առաջին խաղակէստում մեր թիմը չէր կարողանում ազատ տարածութիւն գտնել, բայց յետոյ սկսեցինք աւելի լաւ պահեր ստեղծել եւ գտնել տարածութիւն: Ամէնակարեւորն է, որ յաղթեցինք 4:0 հաշուով եւ դուրս եկանք յաջորդ փուլ: Ես խփեցի բարձրակարգ հակադրոհից յետոյ: Ամէն ինչ շատ արագ տեղի ունեցաւ: Նշանակութիւն չունի՝ ես խաղում եմ, թէ ոչ: Ամէն դէպքում, ձգտում եմ անել առաւելագոյնը թիմի համար», - Միթարեանի խօսքը մէջբերում է BBC-ն:

ԹԻԵՐԻ ԱՆՐԻ. ՄՐՅԱՎԱՐՆԵՐԻ ՍԽԱԼՆԵՐԸ ԱԶՂՈՒՄ ԵՄ ԱՆՈՅԵԱՆԱԿԱՆ ՄՐՅԱՎԱԶՔԻ ՎՐԱՅ, ԱՆՅՐԱԺԵՇՏ Է ԿՐԿՆԱՊԱՏԿԵՐԻ ՏԵՍԱՅԱՄԱԿԱՐԳ

Լոնտոնի «Արսենալի» եւ Ֆրանսայի հաւաքականի նախկին յարձակող Թիերի Անրիին արտայայտուել է մրցավարութիւնը կրկնապատկերների տեսահամակարգով գինեւու օգտին:



«Անցած շաբաթ «Տոտենհեմի» դէմ խաղում Ստերլինգի դրուագում մրցավարը չէր կարող չնշանակել 11 մեթրանոց: «Հալ Սիթիին» չտուեցին 11 մետրանոց Մարկոս Ալոնսոյի խախտման համար: Մրցավարը չտեսաւ Կոսելնիի խաղից դուրս վիճակը «Բարնլիի» դարպասին նշանակած 11 մետրանոցից առաջ, որը յաղթանակ բերեց «Արսենալին»: «Սիթիին» կարող էր յաղթել, իսկ «Չելսին» ու «Արսենալը» կորցնել միաւորներ: Այդ ամէնը ազդում է արտօտանական մրցավազքի վրայ: Մրցավարներին օգնութիւն է պէտք: Խաղն այնքան է արագացել, որ մրցավարները պարզապէս չեն հասցնում: Երբ Բեյլերինը հակադրոհի է անցնում, նրա հետեւից պրոֆեսիոնալ ֆուտպոլիստը չի հասնի, իսկ մրցավարը վազելու հետ նաեւ պէտք է հասցնի ամէն ինչ տեսնել: Հնարաւոր չէ դա: Անհրաժեշտ է եւս մէկ մրցավար, որը կը նստի էկրանի դիմաց եւ արագ որոշումներ կ'ընդունի՝ անմիջապէս յայտնելով խաղադաշտի մրցավարներին», - Թիերի Անրիի խօսքը մէջբերում է Goal.com-ը:

ՄԱՐԿՈՍ ՊԻՉԵԼԻՆ ՏԵՂԱՓՈԽՈՒԵԼ Է ՅՈՒՆԱԿԱՆ ԱՎՈՒՄԲ

Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Մարկոս Պիչելին տեղափոխուել է յունական Քսանտի ակումբ, որը հանդէս է գալիս երկրի բարձրագոյն լիգայում: Յիշեցնենք, որ Մարկոսը հանդէս էր գալիս ԱՄԷ «Էլ Ֆուլջեյրա» ակումբում:

Քսանտին Յունաստանի առաջնութիւնում ընթանում է 3-րդ տեղում:

ԼՈՒԻՍ ԷՆՐԻԿԷ. ԶԻՆԱՍՏԱՆՈՒՄ ՖՈՒՏՊՈԼԻՍՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԻՏԵԱԼԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿ Է

«Բարսելոնայի» գլխաւոր մարզիչ Լուիս Էնրիկեն ֆուտպոլիստներին տեղափոխութիւնները Չինաստան չի համարում բացասական երեւոյթ:

«Ֆուտպոլիստների եւ մարզիչների ցանկութիւնն աւելի շատ գումար վաստակելը բնական է: Կարծում եմ՝ խաղացողների համար հիմա իտէլական իրավիճակ է Չինաստանում: Լրագրողները նոյնպէս փոխում են աշխատավայրը եւ շնորհաւորանքներ ստանում ընկերներից առաջխաղացման համար եւ չեն համարում դաւաճան: Իսկ ֆուտպոլիստներին անմիջապէս պիտակաւորում են: Իմ ապագայի մասին հիմա ոչինչ չեմ կարող ասել:

Երբ շաբաթ առաջ մեր ասուլիսները նման էին թաղման: Այժմ ամէն ինչ փոխուել է: Մեր խնդիրն է բարելաւել խաղի որակը եւ շատացնել դրական արդիւնքների քանակը», - ասել է Լուիս Էնրիկէ:

ՆԱԴԱԼ. ՖԵԴԵՐԵՐՆ ԱԻԵԼԻ ԱՐԺԱՆԻ ԷՐ ԱՅՍ ՏԻՏՂՈՍԻՆ

Թենիսի Աւստրալիայի բաց առաջնութեան եզրափակիչում շուեյցարացի Ռոջեր Ֆեդերերին պարտուած իսպանացի Ռաֆայէլ Նադալը շնորհաւորել է եւ արժանին մատուցել մրցակցին:



«Շնորհաւորում եմ Ռոջերին: Չարմանալի է, թէ ինչպէս նա խաղաց այսօր: Ես պայքարեցի, ինչքան կարողացայ, բայց Ռոջերն ինձնից աւելի էր արժանի այս տիտղոսին: Ես առաջին անգամ անցկացրեցի մէկ ամիս Աւստրալիայում: Մարգասէրների աջակցութիւնն անկարագրելի էր: Երբեք չեմ մոռանալ այս միջոցառումը: Սա աշխարհի լաւագոյն մրցաշարերից մէկն է: Շնորհակալութիւն կազմակերպիչներին», - ասել է Նադալը պարգեւատրութեան արարողութեան ժամանակ:

Յիշեցնենք, որ Նադալը եզրափակիչում Ֆեդերերին պարտուել է 4:6, 6:3, 1:6, 6:3, 3:6 հաշուով:

ՍԵՐԵՆԱ ՈՒԼԻՎԱՍՍԸ՝ AUSTRALIAN OPEN-Ի ՅԱՂԹՈՂ

Ա շ ի ա Ր Հ Ի երկրորդ ռակետ Սերենա Ուլիվամսը նուաճեց թենիսի Աւստրալիայի բաց առաջնութեան կանանց մենախաղի յաղթողի տիտղոսը:



Եզրափակիչում 35-ամեայ ամերիկուհին 2 սեթում վստահ յաղթանակ տարաւ իր աւագ քրոջ՝ Վինուս Ուլիվամսի նկատմամբ: 1 ժամ 21 րոպէ տեւած մրցախաղում գրանցուեց 6:4, 6:4 հաշիւը:

Եզրափակիչ մրցախաղին տրիբունայից հետեւում էր նաեւ Սերենա Ուլիվամսի ամուսինը՝ Reddit սոցիալական լրատուական կայքի համահիմնադիր եւ համասեփականատեր, Պրուքլինում ծնուած ամերիկահայ Ալեքսիս Օհանեսը:

Այս տարի Australian Open-ի յաղթողի տիտղոսը չկարողացաւ պաշտպանել աշխարհի առաջին ռակետ, գերմանացի Անժելիկ Կերբերը, որը 1/8 եզրափակիչում պարտութիւն էր կրել ամերիկացի Կոկո Վանդեբեքեից, որին կիսաեզրափակիչում յաղթեց Վինուս Ուլիվամսը:

Սերենան 7-րդ անգամ յաղթեց Australian Open-ում՝ կրկնելով 2003, 2005, 2007, 2009, 2010, 2015 թուականների յաջողութիւնը: Սա նրա 23-րդ տիտղոսն էր «Մեծ սաղաւարտի» մրցաշարերում: Այդ ցուցանիշով ամերիկուհին շրջանցել է լեգենդար Շտեֆի Գրաֆին ու երկրորդն է՝ գիշերով միայն աւստրալուհի Մարգարետ Կորտին, որը «Մեծ սաղաւարտի» մրցաշարերի 24-ակի յաղթող է:

«ՌԵԱԼ» ՅԱՂԹԵՑ՝ 3:0

Սպանիայի առաջնութեան 20-րդ տուրում Մադրիդի «Ռեալն» ընդունեց «Ռեալ Սոսիեդադին» եւ առաւելութեան հասաւ 3:0 հաշուով: Աչքի ընկան խորուած կիսապաշտպան Մատէօ Կովաչիչը, պորտուգալացի յարձակող Քրիստիանու Ռոնալդուն եւ սպանացի յարձակող Ալվարո Մորատան: Հիւրերը 74-րդ րոպէից խաղում էին 10 ֆուտպոլիստներով:

Ախոյեան «Պարսելոնան» Սեւիլիայում հիւրընկալուեց «Բետիսին» եւ պարտութիւնից խուսափեց վերջին րոպէին ուրուգուացի յարձակող Լուիս Սուաւեսի խփած կոլի շնորհիւ: Կոլային փոխանցումը կատարեց արժենթինացի Լիոնել Մեսին: Հաշիւը 75-րդ րոպէին բացել էր դաշտի տէրերի սպանացի կիսապաշտպան Ալեքսանդեր Ալբարիան:

Լուիս Էնրիկէի գլխաւորած թիմը կարող էր 3 միաւոր վաստակել, եթէ 79-րդ րոպէին մրցավարները նկատէին, որ գնդակը յայտնուել է «Բետիսի» դարպասում:

«Ռեալը» 19 խաղից յետոյ 46 միաւորով գլխաւորում է մրցաշարային աղիւսակ: 4-ական են միաւոր են հետ «Բարսելոնան» եւ «Սեւիլիան»:

ԱՆԱՍՏԱՍԻԱ ԳԱԼՈՒՍՏԵԱՆԸ 12-ՐԴՆ Է ԵՐՐՈՊԱՅՈՒՄ

Հայաստանը ներկայացնող գեղասահորդուհի Անաստասիա Գալուստեանը 12-րդ տեղը գրաւեց Չեխիայի Օստրաւա քաղաքում ընթացող գեղասահքի Եւրոպայի առաջնութեան կանանց մենասահքում:

Մարգասէին կարճ ծրագրից յետոյ ընթանում էր 10-րդ հորիզոնականում, սակայն ազատ վարժութիւնում նա ցոյց տուեց 14-րդ արդիւնքը եւ ընդհանուր հաշուարկով նահանջեց 12-րդ տեղ:

Յաւելենք, որ անցած տարուայ առաջնութեան համեմատ Անաստասիա Գալուստեանը առաջադիմել է երեք աստիճանով: